

Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ

Ամրացնել փոխհարաբերությունները որպես քրիստոնյա

13



Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ

Ամրացնել փոխհարաբերությունները որպես քրիստոնյա

Ջեդիսակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսանողի ձեռնարկ

5-րդ խմբագրում



**Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
Ամրացնել փոխհարաբերությունները որպես քրիստոնյա
Ուսանողի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Յեդինակ՝ Դեյվիդ Բեթթի**

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հոչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, *Personal Relationships with Others, 5th edition* վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել:

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org



Վերջին անգամ վերանայվել է. 10-2022

Բովանդակություն

Գլուխ 1. Ինչպիսի՞ ընկեր եմ ես.....	4
Ա. Փոխհարաբերությունների քո անձնական պատմությունը:.....	4
Բ. Ինչպիսի՞ ընկեր ես դու մյուսների համար:.....	11
Գ. Ինչքանո՞վ ես դու լավ հասկանում առողջ փոխհարաբերությունների վերաբերյալ Աստծո տեսակետը:.....	13
Գլուխ 2. Ընկերության չորս տեսակներ.....	18
Ա. Ծանոթներ:.....	18
Բ. Պատահական ընկերներ:.....	20
Գ. Մոտիկ ընկերներ:.....	21
Դ. Մտերիմ ընկերներ:.....	22
Գլուխ 3. Ինչպե՞ս կառուցել հիանալի ընկերություն.....	25
Ա. Սկսի՛ր քեզնից:.....	25
Բ. Ի՞նչ սահմանների կարիք ունեմ ես իմ փոխհարաբերությունների մեջ:..	29
Գ. Ինչպե՞ս ընտրել ապահով ընկերներ:.....	36
Գլուխ 4. Սեռական փոխհարաբերություններ և քրիստոնեական կյանք.....	46
Ա. Սեռական կյանքը և չամուսնացած մարդը:.....	47
Բ. Հանդիպել/Ընտրել այն անձնավորությանը, ում հետ պետք է ամուսնանաս:.....	55
Գ. Ամուսնություն:.....	62

Գլուխ 1.

Ինչպիսի՞ ընկեր եմ ես

Մարդկանց հետ քո փոխհարաբերությունները կարող են լինել քո կյանքի մեծագույն ուրախության պատճառ: Այդ փոխհարաբերությունները կարող են լինել նաև քո կյանքի ամենախորը վիրավորանքների պատճառ: Փոխհարաբերությունների վերաբերյալ այս դասընթացը սկսելով՝ մենք ուզում ենք, որ դու իմանաս, թե ինչպես կարող են փոխհարաբերությունները դառնալ քո կյանքի դրական մասը:

Առաջ նայելով՝ ասենք, որ քո ապագա հաջողություններն ու ձախողումները կշարունակեն մեծապես ազդվել մարդկանց հետ ունեցած քո փոխհարաբերություններից: Թե ում ես դու ընտրում որպես քո ապագա ընկեր՝ մեծապես կազդի քո կյանքի բոլոր ասպարեզների վրա:

Դու չես կարող կյանքում հաջողակ լինել, եթե մարդկանց հետ դրական փոխհարաբերություններ չունենաս:

Ա. Փոխհարաբերությունների քո անձնական պատմությունը:

Մենք բոլորս էլ ունենք փոխհարաբերությունների մեր անձնական պատմությունը, և ոչ մեկինս մյուսի պատմությանը նման չէ: Ո՛վ ես դու այսօր և ինչքան՝ վ ես երջանիկ, սա մեծ իմաստով ընտանիքի անդամների ու ընկերների հետ ունեցած քո փոխհարաբերությունների հետևանքն է: Քո կյանքի հաջողություններն ու ձախողումները կապված են այդ մարդկանց հետ:

Սկսենք ավելի մոտիկից դիտարկել, թե ինչպես են քո անցյալի այս փոխհարաբերություններն ազդել քո կյանքի վրա:

1. Քո ընտանեկան փոխհարաբերությունները:

Քո ծնվելու օրվանից ի վեր, նույնիսկ նախքան կկարողանայիր խոսել կամ այլ բաներ անել, դու սկսել ես մարդկանց հետ փոխհարաբերություններ զարգացնել: Քո ընտանիքի հետ այդ փոխհարաբերություններն ազդել են քեզ վրա՝ սկսած քո կյանքի առաջին իսկ օրվանից:

Ուրեմն, մի պահ ժամանակ հատկացրու և վերհիշի՛ր քո կյանքը՝ սկսած մանկությունից մինչև հիմա: Ինքդ քեզ հարցրո՛ւ. «Ի՞նչ դասեր եմ ես սովորել անձնական փոխհարաբերությունների մասին իմ ընտանիքից»:

ա. Որքա՞ն անառողջ (դիսֆունկցիոնալ) է եղել քո ընտանիքը:

Ոչ մի ընտանիք կատարյալ չէ, սակայն որքա՞ն առողջ է եղել քո ընտանիքը: Դու շա՞տ սեր ես վայելել, թե՞ քո ընտանիքը լցված է եղել կոնֆլիկտով ու քառսով: Դու քեզ շրջապատված զգացե՞լ ես քո ընտանիքի անդամներով, թե՞ միայնակ ես եղել: Դու սիրող հայր և սիրող մայր ունեցե՞լ ես քո ողջ մանկության ընթացքում:

Քո ծնողները ճշմարիտ քրիստոնյանե՞ր են եղել: Նրանք սիրե՞լ են Աստծուն: Աստծո հանդեպ նրանց փափագն ազդո՞ւմ էր նրանց ամենօրյա կյանքի վրա: Նրանց կյանքը գործնականորեն և սիրով ներկայացնո՞ւմ էր Աստվածաշնչի ուսուցումն այն մասը, թե ինչպիսին պետք է լինի ծնողների վերաբերմունքը իրենց երեխաների հանդեպ:

Շատ կան հավատացյալ ծնողների ընտանիքներ, որոնք, սակայն, անառողջ են: Հավատացյալ լինելն ինքնաբերաբար չի ստեղծում առողջ ընտանիք: Քո ընտանիքն ապահո՞վ վայր էր: Դու սովորո՞ւմ էիր, թե ինչպես մարդկանց հետ սիրո փոխհարաբերություններ զարգացնել:

Ցավով եմ ասում, որ շատերը մեծացել են անառողջ ընտանիքում՝ լի խնդիրներով: Իսկ ինչպե՞ս դու կարող ես իմանալ, արդյո՞ք քո ընտանիքը եղել է առողջ: Ի՞նչ չափող գործիք դու կօգտագործես կողմնորոշվելու համար, թե արդյո՞ք դու մեծացել ես առողջ ընտանիքում:

Որոշակի խորը հետազոտություն է հարկավոր, որպեսզի կարողանանք այս հարցին ճիշտ պատասխանել: Այս դասընթացի վերջում դու պետք է ավելի լավ հասկանաս, թե ինչ է նշանակում մարդկանց հետ անձնական առողջ փոխհարաբերություններ ունենալ: Այդ ժամանակ դու կունենաս որոշ գործիքներ՝ գնահատելու համար քո անցած փոխհարաբերությունները: Հենց այս նույն գործիքները քեզ կօգնեն ապագայում, երբ ցանկանաս առողջ փոխհարաբերություններ զարգացնել թե՛ քո ընտանիքի, թե՛ տարբեր ընկերների հետ:

Անկախ այն բանից, թե որքան անառողջ է եղել քո ընտանիքը, Աստված կարող է քեզ օգնել, որպեսզի դրական փոխհարաբերություններ զարգացնես քո կյանքի մնացած հատվածում: Նույնիսկ եթե քո ընտանիքի անցյալ պատմությունը վնասել է քո կյանքը, Աստված կարող է օգնել քեզ, որ բարեփոխես քո ապագան, որպեսզի քո ընտանիքի պատմությունն ինքնաբերաբար քեզ չարգելափակի, որպեսզի մարդկանց հետ վարվես այնպես, ինչպես ժամանակին քեզ հետ են վարվել:

Որոշ մարդիկ դժվարանում են առերեսվել այն ճշմարտությանը, թե ինչպես է իրենց ընտանիքն իրենց վնասել: «Ես իրականում սիրում եմ նրանց»: - Եթե սա քո դեպքն է, ապա վստահ եղիր, որ մենք չենք պատրաստվում կործանել քո ընտանիքի հանդեպ քո սերը: Այս դասընթացը կազմված է, որպեսզի օգնի քեզ առերեսվելու քո անցյալի իրականության հետ և այնտեղից սովորելու թե՛ դրական, թե՛ բացասական դասեր: Դրանից հետո միայն կկարողանաս առաջ գնալ այն վստահությամբ, որ Աստված քեզ կօգնի մարդկանց հետ դրական փոխհարաբերություններ զարգացնելու հարցում:

Այս դասընթացն անցնելիս շարունակի՛ր ինքդ քեզ հարցնել. «Որքա՞ն առողջ է եղել իմ ընտանիքը: Ինչքանո՞վ են նրանք մշտական օրինակ ծառայել ապահով և աստվածապաշտ փոխհարաբերությունների համար»:

բ. Բռնությունը մաս կազմե՞լ է քո ընտանիքի պատմության մեջ:

Քո անցյալը վերհիշելիս մտածի՛ր, թե արդյոք բռնությունը մաս կազմե՞լ է քո ընտանեկան պատմության մեջ: Դու սեռական բռնության ենթարկվե՞լ ես: Ֆիզիկական բռնությա՞ն: Զգացմունքային բռնությա՞ն: Բառացի՞ բռնության: Եթե դու անցյալում բռնության ես ենթարկվել, ապա այդ դեպքերը խորապես վնասել են մարդկանց հետ քո փոխհարաբերությունները: Այդ դեպքերը հսկայական ազդեցություն կունենան մարդկանց հետ քո փոխհարաբերությունների վրա նաև հետագա տարիների ընթացքում:

Բռնությունը վատ հետևանքներ է թողնում, և մենք չենք կարող սա անտեսել: Մի՛ կարծիր, որ կարող ես կյանքում առաջ գնալ՝ ձևացնելով, որ ամեն բան կարգին է, կամ պարզապես անտեսելով քո անցյալի այդ հատվածը: Եթե ուզում ես աճել և հաղթահարել քեզ հասցված այդ վնասը, ուրեմն պետք է ճիշտ օգնություն գտնես՝ լուծելու համար քո կյանքի վրա թողած այդ բռնության հետևանքները: Օգնության մի հնարավորություն է Մալիե Քուլբրեթի գրած աշխատությունը: Դու կարող ես օգնություն գտնել հետևյալ կայքում. www.iteenchallenge.org

Քեզ բռնության ենթարկող մարդիկ անձնական փոխհարաբերությունների ահավոր վատ օրինակ են ծառայել: Այդ բռնությունը նաև վնասել է քեզ՝ քո մեջ բերելով բարկություն, վախ, անվստահություն և շատ ուրիշ բացասական բաներ,

որոնք բոլորն էլ գործում են ընդդեմ քո՝ մարդկանց հետ առողջ փոխհարաբերություններ զարգացնելու կարողության:

Քո ընտանիքի պատմությանը նայելիս հնարավոր է՝ տեսնես, որ ինքդ բռնության զոհ չես եղել: Իսկ քո ընտանիքի մյուս անդամները: Նրանք բռնության ենթարկվել են՝ լինելով մանուկ, պատանի կամ չափահաս: Գուցե նրանք խորապես վնասվել են այդ բռնության պատճառով և զրկվել են քեզ հետ առողջ փոխհարաբերություններ զարգացնելու հնարավորությունից:

Շատերը չեն կարողանում մարդկանց հետ լավ ընկերություն անել: Եվ սա խնդիր է ոչ միայն բռնության ենթարկված մարդկանց համար: Շատերը երբևիցե չեն սովորել, թե ինչպես իմաստավոր ձևով շփվեն մարդկանց հետ: Նրանք իրենց կյանքի մեծ մասն անցկացրել են միայնության զգացումով: Երբ ծնողներն իրենց երեխաներին չեն սովորեցնում առողջ փոխհարաբերությունների հիմնաքարերը, երեխաները հաճախ չեն կարողանում ինքնուրույն դա հասկանալ:

գ. Որո՞նք են փոխհարաբերությունների վերաբերյալ քո ընտանիքի ավանդույթները:

Քո ընտանիքի անդամներին՝ քո ծնողներին, տատիկներին ու պապիկներին, քո հարազատներին անդրադառնալիս ի՞նչ ես կարծում, ի՞նչ ավանդույթներ են փոխանցվել քեզ նրանց կողմից՝ կապված փոխհարաբերությունների հետ: Նրանք կարողանո՞ւմ էին միմյանց հետ լավ շփվել: Առատ սեր կա՞ր նրանց փոխհարաբերությունների մեջ՝ բառերով կամ այլ կերպ արտահայտված:

Կցանկանաս, թե ոչ, դու քո ընտանիքից «դաստիարակություն» ես ստացել փոխհարաբերությունների վերաբերյալ: Նրանք քեզ փոխանցել են մարդկանց հետ հարաբերվելու իրենց փորձը:

Այդ ընտանեկան ավանդույթները, հնարավոր է, լցված լինեն սիրո և ընկերության աստվածաշնչյան դրական սկզբունքներով: Մեկ ուրիշի ընտանեկան ավանդույթներն էլ գուցե շատ անառողջ լինեն: Հեշտ է ասել. «Դե՛հ, ուղղակի մեր ընտանիքն այսպիսին է»: Սա դառնում է հարմար պատճառաբանություն մեր վարքի համար, երբ մարդիկ մատնացույց են անում մեր կյանքից որոշակի բաներ՝ որպես տկարություններ:

Եթե քո ծնողները կախվածության հետ կապված խնդիրներ են ունեցել, ինչպիսին են՝ ալկոհոլը, թմրանյութերը կամ կյանքի վրա իշխող այլ խնդիրներ, ապա դրանք վնասած կլինեն քեզ հետ շփվելու նրանց կարողությանը: Այսպիսի խնդիրները միշտ ազդեցություն են ունենում տվյալ անձնավորության՝ մյուսների համար ինչպիսի ընկեր լինելուն:

Աստված հստակեցնում է, որ որոշ բաներ, որոնք քո ընտանիքից անցել են քեզ, կարող են դրական չլինել:

Ա Պետրոս 1:18.

«Իմանալով, որ դուք ո՛չ թե ապականացու բաներով եք փրկվել, ինչպես՝ արծաթն է կամ ոսկին, ձեր հայրերի ավանդույթներով ժառանգված ունայն ճամփաներից»:

Քեզ համար կարևոր է, որ ժամանակ հատկացնելով գնահատես քո ընտանեկան ավանդույթները և տեսնես, թե արդյո՞ք դրանք համապատասխանում են մարդկանց հետ շփվելու Աստծո չափանիշներին: Եթե ուզում ես դուրս գալ քո ընտանեկան անատողջ ավանդույթներից, դա կարող է դժվար լինել: Այն, ինչ քեզ՝ որպես երեխայի, սովորեցրել են, կարող է փոխվել, սակայն քեզնից լուրջ աշխատանք կպահանջվի այդ փոփոխությունն իրականացնելու համար:

2. Քո ընկերները:

Քո ընտանիքից դուրս այն մարդիկ, ում հետ դու ընկերություն ես արել քո մանկությունից ի վեր, կարող են մեծ ազդեցություն թողնել քեզ վրա: Այդ ազդեցությունն ավելի է մեծանում, երբ դու դառնում ես պատանի:

ա. Քո ընկերները քեզ համար լա՞վ ընկերներ են եղել, թե՞ վատ:

Անկախ այն բանից, դու ինչքան՝ շա՞տ, թե՞ ընդամենը մի քանի ընկերներ ես ունեցել, միևնույն է, նրանք ազդել են քեզ վրա՝ դրական կամ բացասական: Երբ դու հետազոտում ես այդ ընկերներին, նրանք ավելի բարդ են դառնում: Քո ընկերներից ոմանք գուցե շատ դրական բաներ են բերել ձեր փոխհարաբերությունների մեջ: Իսկ գուցե մեկ այլ ասպարեզում նրանք բացասական ազդեցություն են ունեցել քեզ վրա: Օրինակ, թե ինչպես են նրանք իրենց պահում կոնֆլիկտների ժամանակ, կամ ինչպես են վարվում բարկացած ժամանակ, կամ ինչպես են վերաբերվում իրենց ծնողների հետ:

Քեզ համար կարող է դժվար լինել՝ անկեղծանալ քո ընկերների հարցում, որովհետև մենք բոլորս էլ աշխատում ենք տեսնել լավը և անտեսել այն վատ ազդեցությունը, որ նրանք թողել են մեր կյանքի վրա: Տվյալ մարդու հետ քո ընկերությունը գնահատելու համար լավագույն գործիքը լավ ընկերոջ վերաբերյալ Աստծո չափանիշներն օգտագործելն է: Մենք այս դասընթացին ավելի ուշ կդիտարկենք այդ չափանիշները:

Հենց հիմա կարո՞ղ ես հիշել մի օրինակ, որտեղ քո ընկերները դրական ազդեցություն են ունեցել քո կյանքի վրա: Կարո՞ղ ես նաև հիշել, թե որ հարցում են քո ընկերները խնդիր առաջացրել քո կյանքում: Մենք սա կուսումնասիրենք Ուսուցման ուղեցույցի 1-ին և 2-րդ նախագծերում: Մեր ընկերներից ոչ ոք կատարյալ չէ: Կարևորն այն է, որ հասկանանք, թե ինչ դրական և բացասական ազդեցություններ են մեր ընկերներն ունենում մեզ վրա, որից միայն հետո կողմնորոշվենք, թե ինչպես է Աստված ուզում, որ մենք արձագանքենք տվյալ ընկերությանը:

բ. Դու ներգրավված եղե՞լ ես թունավոր փոխհարաբերությունների մեջ:

Երբ Քրիստինեն դեռ պատանի էր, ընկերացավ մի տղայի հետ, ով սկզբում լավ ընկեր էր թվում: Սակայն շուտով նրանց ընկերությունը վատ շրջադարձ ունեցավ: Փոխանակ դադարեցնի նրա հետ շփվելը, Քրիստինեն պահում է այդ կապը, թեև ավելի ու ավելի է բռնության ենթարկվում: Ի վերջո, նա խզում է հարաբերություններն այդ տղայի հետ, բայց շուտով հայտնվում է մեկ այլ շրջապատում, որտեղ նրա հետ ավելի վատ էին վարվում, քան նախկինում: Միայն Աստծո հրաշքով է նա կարողանում դուրս պրծնել այդ ծայրահեղ վիճակից: Հետագա ամիսներին նա դիմում է Աստծո օգնությանն ու իր կյանքը հանձնում Աստծուն:

Քրիստինեն նաև տարվել էր թմրամոլությամբ: Անցնելով Թին Չելենջի ծրագիրը՝ ավարտում է այն: Սակայն մի քանի ամիս անց նա կապվում է մեկ այլ տղամարդու հետ, ով ծայրահեղ վտանգավոր էր և ճնշող: Միայն մի քանի ընկերների օգնությամբ նա գալիս է այն գիտակցության, որ դա թունավոր ընկերություն է, և պետք է դադարեցնել այն:

Քրիստինեի դեպքը կրկնվում է շատերի կյանքում, ովքեր ներգրավված են եղել բռնությամբ լի, թունավոր ընկերությունների մեջ: Նրանք հաճախ դժվարանում են դուրս գալ այդ կարգի ընկերությունից: Նրանք, ովքեր հայտնվում են թունավոր ընկերության մեջ, հենց խնդրի մեծ մասն են հանդիսանում: Նրանց ներքին խնդիրները հիմք են ստեղծում, որպեսզի հեշտությամբ ընկնեն այդ վտանգավոր ընկերության ծուղակը:

գ. Ի՞նչ խնդիրներ ես դու ունեցել քո ընկերների հետ:

Քո ներկա կամ նախկին ընկերների հետ հարաբերություններում ի՞նչ խնդիրներ ես ունեցել նրանց հետ: Կատարյալ ընկերներ չեն լինում, այնպես որ մենք բոլորս էլ խնդիրներ ունեցել ենք նրանց հետ:

Դու կարող ես ցուցակագրել այն խնդիրները, որոնք դու ունենում ես մարդկանց հետ ամուր և փոխադարձաբար բավարարող ընկերություն կառուցելիս: Որոշ խնդիրներ կարող են կապված լինել այն ընկերների հետ, որոնց դու ընտրում ես: Կամ գուցե խնդիրները քո ներսում են: Հնարավոր է՝ մարդկանց հետ քո ընկերությունը վնասվում է քո բարկության, քննադատող խոսելաձևի կամ եսասիրության պատճառով:

Քո ընկերները շա՞տ են խնդիրներ ստեղծել քո կյանքում:

Ժամանակ հատկացրու, որպեսզի մտածես քո ընկերների վերաբերյալ և ինքդ քեզ հարցնես. «Ես այսպիսի՞ն են ուզում, որ իմ ընկերների հետ շփումը լինի մինչև իմ կյանքի վերջը»:

3. Երևակայական ընկերություն:

Երեխաների մեծ մասը մեծ երևակայություն և սեր ունի խաղերի հանդեպ, լինի՝ տիկնիկներով, դինոզավրերով կամ ձիերով: Մեծանալով՝ դժվար է դառնում իրական մարդկանց հետ դրական փոխհարաբերություններ զարգացնելը: Միգուցե քեզ համար երևակայական փոխհարաբերություններ զարգացնելն ավելի ապահով ու հեշտ է թվում: Եթե մարդիկ քեզ խորը վիրավորել են, ապա երևակայական փոխհարաբերությունների մեջ ապրելը կարող է ավելի ապահով ու անցավ թվա:

Մեր հասարակությունն ու այսօրվա շարունակ զարգացող գիտությունը և տեխնոլոգիաներն ավելի ու ավելի շատ հնարավորություններ են տալիս երևակայական փոխհարաբերություններ կառուցելու հարցում՝ ֆիլմերի, ռոմանտիկ սերիալների, տեսախաղերի, համացանցի և երաժշտության միջոցով: Երևակայական փոխհարաբերությունների մեջ դու ես վերահսկում, լինի դա տեսախաղ կամ մտացածին պարզ հարաբերություններ: Ոչ մի վտանգ չկա, որ նման փոխհարաբերությունների մեջ քեզ կարող են լքել: Սակայն երևակայական փոխհարաբերությունները երբեք չեն կարող իրական բավարարվածություն բերել, որովհետև Աստված քեզ ստեղծել է իրական մարդկանց հետ կապեր հաստատելու, շփվելու բնածին կարիքով:

Բ. Ինչպիսի՞ ընկեր ես դու մյուսների համար:

Թե՛ քո ընտանիքը, թե՛ քո ընկերները մեծ չափով ազդել են քեզ վրա: Սակայն հիմա ե՛կ այդ փոխհարաբերությունները դիտարկենք մեկ այլ կողմից՝ քո կողմից: Ինչպիսի՞ ընկեր ես դու եղել մյուսների համար:

1. Դու ապահով՞վ ընկեր ես:

Մարդիկ ուզո՞ւմ են քեզ հետ ընկերություն անել: Նրանք քեզ նայո՞ւմ են որպես մի անձնավորության, ով դրական ազդեցություն է ունենում իրենց կյանքի վրա: Իսկ ամենակարևորը՝ ի՞նչ է մտածում Աստված քո մասին: Եթե՛ Նա քեզ գնահատելու լիներ, ի՞նչ կասեր քո մասին: Նա քեզ կբնութագրե՞ր որպես լավ ընկեր:

Ի՞նչն է քեզ ապահով ընկեր դարձնում մարդկանց համար: Ի՞նչ հատկանիշներ ունես դու քո կյանքում, որ քեզ դրական և անվնաս ընկեր է դարձնում մարդկանց համար:

Դու ուրիշներին խնդիրների մեջ գցե՞լ ես: Կամ գուցե դու մարդկանց ազատե՞լ ես խնդիրներից: Եղե՞լ է, որ քո պատճառով մարդիկ զիջել են իրենց սկզբունքները: Թե՞ դու եղել ես այնպիսի մեկը, ով նպաստել է, որ նրանք ավելի լավը դարձնեն իրենց չափանիշները:

Մարդիկ կարո՞ղ են վստահել քեզ: Իսկ Աստված կարո՞ղ է վստահել քեզ:

Եթե քո ընտանիքի անդամներն ու ընկերները քեզ գնահատելու լինեն, ինչպե՞ս քեզ կգնահատեն:

2. Դու փոխհարաբերություններով «բռնված» ես:

Աննան գեղեցիկ աղջիկ է, նա միշտ ընկերներ ունեցել է: Խնդիրն այն է, որ այդ ընկերություններից ոչ մեկը երկար չի դիմացել: Նա մեծացել է բռնություններով լի մի ընտանիքում: Երբեք հարկ եղած սեր և պաշտպանվածություն չի զգացել իր ծնողների կողմից:

Իր երիտասարդության տարիներին նա սկսել է սեր փնտրել ուրիշ մարդկանց հետ փոխհարաբերությունների մեջ: Գեղեցիկ արտաքինի ու վառ անհատականության շնորհիվ նրա համար հեշտ էր ընկերներ գտնել: Սակայն նա մի ընկերոջից արագ անցնում էր մեկ ուրիշի հետ ընկերություն անելու: Շուտով նրանք դառնում էին «լավագույն ընկերներ»: Նա, ինչքան հնարավոր է, օգտվում էր այդ ընկերությունից, սակայն երբ հոգնում էր, թողնում էր այդ անձնավորությանն ու սկսում փնտրել մեկ ուրիշին, ով նրան ավելի լավ կսիրեր: Իր խոսքով ասած՝ ինքը փոխհարաբերություններով «բռնված» մարդ էր:

Վերջնական արդյունքում Աննան հայտնվում է փողոցում, իսկ նրա ամուսինը՝ քանտում: Հիմա նա ոչ մեկին չէր կարողանում դիմել, որովհետև մինչև վերջ շահագործել էր իր ընկերներին: Վերջապես իր հուսահատության մեջ նա դիմում է Աստծո օգնությանը, ինչը նրա կյանքում փոփոխությունների երկար շղթայի սկիզբն է դառնում: Այդ փոփոխությունների մի մասը սովորելն էր, թե ինչպես Աստծո ասած ձևով առողջ և դրական փոխհարաբերություններ կառուցել մարդկանց հետ: Մի բան, որ նա իր նախկին կյանքում երբեք չէր արել:

3. Դու սխալին աջակցո՞ղ ես:

Առողջ ընկերության դրական հասկանիչներից մեկն այն է, որ մենք օգնում ենք մեկս մյուսին: Սակայն մի ընդհանուր խնդիր, որն այսօր գոյություն ունի բազմաթիվ փոխհարաբերությունների մեջ, այն է, որ ընկերներից մեկը կարող է սխալին աջակցող լինել և սխալ օգնություն առաջարկել: Փոխանակ օգնելու, որ իր ընկերն աճի և ավելի լավ մարդ դառնա, նա նպաստում է խնդրի մեծանալուն իր ընկերոջ կյանքում:

Օրինակ, դու սուտ ես խոսում, որպեսզի ծածկես քո ընկերոջ արած սխալը: Դու ազատում ես քո ընկերոջը, երբ նա վատ որոշում է կայացնում իր անպատասխանատու ապրելակերպի պատճառով: Դու չես ընդունում խնդրի լրջությունն ու արդարացումներ ես գտնում դրա համար: Եվ նրան փող տալով ավելի ես խորացնում խնդիրը՝ փոխանակ թույլ տալու, որ նա սեփական մաշկի վրա զգա իր քայլերի բացասական հետևանքները:

Սխալին աջակցելու մեծագույն խնդիրն այն է, որ նման անձնավորությունը կարծում է, թե ինքն իրականում օգնում է ընկերոջը: Նման մարդու համար շատ դժվար է հասնել այն գաղափարն ընդունելու գիտակցության, որ հենց ինքն է հանդիսանում այդ խնդրի մի մասը:

Երբ անդրադառնում ես մարդկանց հետ քո փոխհարաբերություններին, ըստ քեզ, դու է՞լ ես սխալին աջակցող եղել: Այսինքն՝ դու սխալ օգնություն առաջարկե՞լ ես քո ընկերներին: Սա բավականին դժվար ասպարեզ է գնահատելու համար: Դու, հնարավոր է, ինչ-որ մեկի օգնության կարիքն ունենաս, ով կկարողանա ավելի անաչառ լինել այս խնդիրը քո կյանքում նկատելու հարցում: Հարցն ավելի խորը և մանրագնին ուսումնասիրված է Դեյվիդ Բեթթիի՝ «Present Day Miracles at Teen Challenge» գրքում: Այս գրքում մի գլուխ կա («Enabling»)՝ նվիրված նշված թեմային:

Այսպիսով, ինչքանո՞վ ես դու լավ ընկեր: Հասկանալի է, որ քո ընտանիքն ու ընկերները մեծ ազդեցություն են թողել քեզ վրա: Սակայն դու ինքդ էլ շատ որոշումներ ես կայացրել, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի ընկեր ես դու մյուսների համար:

Գ. Ինչքանո՞վ ես դու լավ հասկանում առողջ փոխհարաբերությունների վերաբերյալ Աստծո տեսակետը:

Տեսնենք, թե ինչ է Աստված ասում փոխհարաբերությունների մասին: Տեսնենք, թե արդյո՞ք մեր ընկերները մեզ վրա ազդել են Աստծո ուզած ձևով, կամ արդյո՞ք մենք կարիք ունենք մարդկանց հետ շփման հարցում մեծ փոփոխություններ անել մեր կյանքում: Աստվածաշունչն ուսուցումների և օրինակների մի հսկայական պաշար ունի մեզ համար այն առումով, թե ինչպես փոխհարաբերություններ զարգացնենք մարդկանց՝ թե՛ ընտանիքի անդամների, թե՛ ընկերների հետ:

1. Քո կյանքում Աստծո առաջնահերթությունը փոխհարաբերությունների վերաբերյալ:

Աստված փոխհարաբերություններին մեծ արժեք է տալիս: Աստվածաշնչի երկու մեծագույն պատվիրանները կապ ունեն փոխհարաբերությունների հետ: Աստված հստակ ասում է, որ ամենակարևոր հարաբերությունը, որ դու կարող ես որևէ մեկի հետ ունենալ, դա քո փոխհարաբերությունն է Աստծո հետ: Նա նաև հստակեցնում է, որ սերը պետք է լինի այդ անձնական փոխհարաբերության հիմքը:

Մարկոս 12:29-31.

«Եվ Հիսուսը պատասխանեց նրան. «Բոլոր պատվիրաններից առաջինը սա է. «Լսի՛ր, ո՛վ Իսրայել, մեր Տեր Աստվածը մեկ Տեր է. և սիրի՛ր քո Տեր Աստծուն ամբողջ սրտովդ, ամբողջ անձովդ և ամբողջ մտքովդ և ամբողջ զորությամբդ». սա է առաջին պատվիրանը»:

Եվ երկրորդը սրա նման է. «Դրացուդ անձիդ պես սիրի՛ր»:

Սրանցից ավելի մեծ ուրիշ պատվիրան չկա»:

Աստվածշնչի՝ մեծությամբ երկրորդ պատվիրանը կապ ունի մարդկանց հետ ունեցած մեր փոխհարաբերությունների հետ: Շատ հստակ է, որ Աստված ուզում է, որ դու փոխհարաբերություններ ունենաս մարդկանց հետ: Նա չի ուզում, որ դու մեկուսացած լինես մարդկանցից: Աստված ուզում է, որ այդ փոխհարաբերությունները դու կառուցես այն ուղեցույցների հիման վրա, որոնք Նա քեզ տվել է Աստվածաշնչում:

2. Քո վաղ շրջանի դասերի առումով՝ փոխհարաբերությունների վերաբերյալ Աստծո ծրագիրը:

Աստվածաշունչը շատ պարզ ասում է, որ Աստծո ծրագիրը քո և յուրաքանչյուրի համար այն է, որ մենք բոլորս մեծանանք ընտանիքում՝ սիրող հոր և մոր հետ, ովքեր խորապես կսիրեն Աստծուն և քեզ: Աստծո ծրագիրն է այն, որ այդ սիրող ընտանիքում դու սովորեիր, թե ինչպես մարդկանց հետ փոխհարաբերություններ ունենալ՝ օրինակ վերցնելով քո ծնողներից, թե ինչպես են նրանք սիրում իրար և Աստծուն: Աստված ուզում է, որ դու ընտանիքում սովորես լավ ընկեր լինելու և ընտրելու հիմունքները:

Աստծո ծրագիրն այն է, որ դասերը, որոնք դու կսովորես տանը, քեզ նախապատրաստեն այն դժվարությունները հաղթահարելու համար, որոնց կարող ես հանդիպել դրսում՝ մարդկանց հետ անձնական փոխհարաբերություններ կառուցելիս:

Սակայն տխուր իրականությունն այն է, որ մեզնից շատերը չէ, որ մեծացել են այդպիսի դրական ընտանիքներում, այլ հակառակը, այնպիսի մթնոլորտում, որտեղ մեզ շատ վնաս են հասցրել: Փոխանակ սովորենք այն դասերը, որոնք Աստված կուզենար, որ մենք սովորեինք, մենք չզիտակցելով վերցնում ենք բացասական դասեր, որոնք հետո մեծ վնաս են հասցնում մեզ:

3. Աշխարհի տեսակետը համեմատած Աստծո տեսակետի հետ:

Մեծ մարտահրավերներից մեկը, որին դու այսօր հանդիպում ես, տարբերելն է, թե ինչ է աշխարհն այսօր ասում ընկերության մասին՝ համեմատած, թե ինչ է Աստված ասում այդ մասին: Այսօր տիրող մշակույթը մեծ ճնշում է գործադրում երեխաների ու պատանիների վրա, որպեսզի նրանց ձևավորի ըստ իր հավատալիքների, թե ինչպես պետք է շփվել մարդկանց հետ: Գրեթե բոլոր կինոնկարները ներկայացնում են փոխհարաբերությունների պատկերներ: Դու հեշտությամբ կարող ես ընկնել այդ կինոնկարներում ներկայացված օրինակների ազդեցության տակ:

Դպրոցի, աշխատավայրի կամ թաղամասի քո ընկերները արագ կարող են ազդել քեզ վրա, որպեսզի միանաս իրենց արարքներին: Բացի այդ ամենից՝ «Բոլորն այսպես են անում, նշանակում է՝ դա նորմալ է»:

Առողջ փոխհարաբերությունների վերաբերյալ Աստծո չափանիշները երբեք չեն փոխվում, այսօրվա մշակույթի հետ համապատասխանելու միտվածություն չունեն: Աստվածաշունչը լի է փոխհարաբերությունների վերաբերյալ հատուկ ուսուցումներով, այն է՝ ի՛նչն է պատշաճ, և ի՛նչը՝ ոչ: Մի քանի բոպե՛ հատկացրու, որպեսզի մտածես, թե ինչ է ասում ընկերության մասին քո մշակույթը՝ համեմատած, թե ինչ է ասում ընկերության մասին Աստված:

Փոխհարաբերությունների մասին աշխարհի տեսակետը	Փոխհարաբերությունների մասին Աստծո տեսակետը
	Սեր
	Վստահություն
	Գաղտնիքներ
	Սերս
	Նվիրվածություն
	Գեղեցկություն

Փոխհարաբերությունների վերաբերյալ կան ուրիշ շատ թեմաներ ևս, սակայն սկզբի համար այս մի քանի կարևորները բավական են: Երբ դրանք լրացնելու լինես, ինքդ քեզ հարցրո՛ւ. «Ո՞ր կողմի հետ են իմ հավատալիքները համընկնում: Ես ապրում եմ փոխհարաբերությունների հարցում Աստծո տեսակետի հետ համեմա՞տ, թե՞ աշխարհի»:

4. Առակաց գրքի իմաստությունը քեզ համար:

Առակաց գիրքը լի է փոխհարաբերությունների վերաբերյալ իմաստությամբ, որը վերաբերում է թե՛ ընտանիքին, թե՛ ընկերներին: Այդ ուսուցումները քեզ ասում են, թե ինչ փոփոխություններ պետք է քո կյանքում անես, ինչպես նաև՝ ինչ հատկանիշներ փնտրես լավ ընկեր ընտրելիս: Ժամանակ հատկացրու, որպեսզի կարդաս այդ գիրքը և դուրս գրես ընկերության վերաբերյալ բոլոր ուսուցումները: Դրանք դեռ երկար քեզ պետք կզան, որպեսզի հասկանաս, թե ինչ է Աստված ասում մարդկանց հետ փոխհարաբերությունների մասին:

Ահա երկու օրինակ:

Առակաց 13:20.

«Իմաստունների հետ քայլողն իմաստուն կլինի, իսկ անմիտներին ընկերակցողը կկործանվի»:

Առակաց 11:25.

«Բարերար անձը կպարարտանա, և նա, ով ոռոգում է, ինքն էլ կոռոգվի»:

Այս համարներն անգիր անելը շատ կարևոր միջոց է, որպեսզի դրանք քո առօրյա կյանքում կիրառելով՝ արդյունքում կարողանաս ամուր և դրական ընկերություն զարգացնել: Ինչքան դրանք շատ կիրառես քո կյանքում, այնքան ավելի լավ ընկեր կդառնաս ուրիշների համար և դրական ընկերություն կզարգացնես մարդկանց հետ:

5. Սովորի՛ր Աստվածաշնչի մարդկանց օրինակներից:

Աստվածաշնչում՝ Ծննդոցից մինչև վերջին գիրքը, կան ընկերության հստակ օրինակներ. թե՛ լավ, թե՛ վատ: Այս օրինակները կարող են քեզ առատ տեղեկություն տալ դրական փոխհարաբերություններ կառուցելու վերաբերյալ, նաև այն մասին, թե ինչ պետք է անել անառողջ փոխհարաբերությունների կործանիչ հետևանքներից խուսափելու համար:

Կայենն իր եղբոր հետ նախանձով և բարկությամբ վերաբերվելու շատ բացասական օրինակ է ծառայում, որը վերջնական արդյունքում նրան մղում է իր եղբայր Աբելին սպանելուն (Ծննդոց 4:1-12):

Հովսեփը ներկայացնում է իր եղբայրների՝ իր դեմ արած չար արարքները ներելու դրական օրինակ: Եղբայրները նրան, ատելությունից դրդված, վաճառում են ստրկության: Եվ չնայած դրան՝ Հովսեփը շարունակում է Աստծուն առաջին տեղում դնել իր կյանքում, նույնիսկ երբ Պետափրեսի կինը փորձում է գայթակղել իրեն: (Ծննդոց 39):

Դավիթն ու Հովնաթանը շատ մտերիմ ընկերներ էին: Այս ընկերությունը քեզ համար հզոր մի օրինակ կարող է լինել, հատկապես եթե դու մեծացել ես անառողջ ընտանիքում: Հովնաթանը որդին էր Սավուղ թագավորի, ով թողել էր Աստծո հետ իր փոխհարաբերությունը և փորձում էր սպանել Դավթին նախանձի պատճառով: Սակայն, չնայած ընտանեկան այս կործանիչ իրավիճակի, Հովնաթանն իր անձնական կյանքում առողջ որոշումներ է կայացնում: Նա հրաժարվում է իր հոր նման լինել: Դու նույնպես կարող ես մերժել քո ընտանիքի բացասական ազդեցությունը և գրկաբաց ընդունել մարդկանց հետ անձնական փոխհարաբերությունների վերաբերյալ Աստծո ուսուցումները (Ա Թագավորաց 20):

Հռութը որոշեց մնալ իր սկեսրոջ հետ, թեև ստիպված եղավ այլ երկիր տեղափոխվել և ապրել աղքատության մեջ: Նա կարող էր լքել իր սկեսրոջն ու վերադառնալ իր ընտանիքի մոտ, սակայն դրա փոխարեն որոշեց հավատարմություն ցուցաբերել: Նա որոշեց հոգ տանել իր սկեսրոջը և պատասխանատու որոշումներ կայացնել: Աստված Հռութի համար հնարավորություն ստեղծեց, որ ամուսնանա, և այդ բոլորն այն պատճառով, որ նա որոշեց աստվածային սկզբունքներ կիրառել մարդկանց հետ իր փոխհարաբերությունների մեջ (Հռութ, 1-ին և 2-րդ գլուխներ):

Եսթերը որոշեց Աստծուն առաջին տեղում դնել իր կյանքում և դիմեց թագավորին, որպեսզի փրկի հրեաների կյանքն այդ երկրում: Նա որոշեց հարգել հորեղբոր հետ ունեցած իր կապը՝ թեկուզ մեծ վտանգի ենթարկելով իրեն, և այդ բոլորը՝ հանուն Աստծուն պատվելու, իր ընտանիքի և բոլոր հրեաների (Եսթեր, 4-րդ և 5-րդ գլուխներ):

Դանիելն ու իր երեք ընկերներն իրենց հայրենիքից գերեվարվեցին մի հեռու երկիր, որտեղ իրենց տեղական ղեկավարների ցուցումների հետ համակերպվելու ճնշում կար: Դանիելն ու նրա երեք ընկերները որոշեցին չխախտել Աստծո օրենքները, նույնիսկ եթե դա արժենար նրանց կյանքը, կամ առնվազն դուրս շարտվելն այն բարձրակարգ դպրոցից, որտեղ նրանք գտնվում էին: Նրանք Աստծո հետ իրենց փոխհարաբերությունն ավելի արժևորեցին, քան իրենց ղեկավարներին հաճենալը: Նրանք փոխզիջման չգնացին, և որպես հետևանք՝ Աստված նրանց սովեց շնորհ գտնել իրենց ղեկավարների առաջ (Դանիել 1):

Աստվածաշնչում ուրիշ շատ մարդկանց օրինակներ էլ կան, ովքեր դրական կամ բացասական փոխհարաբերություններ ունեցան մարդկանց հետ: Այս պատմությունները կարդալիս ինքդ քեզ հարցրո՛ւ. «Ի՞նչ պետք է ես սովորեմ այս մարդկանց փորձառությունից, որը կարող է ինձ օգնել այսօր»:

6. Ինչպե՞ս էր Հիսուսը վերաբերվում մարդկանց հետ:

Ընկերության և անձնական փոխհարաբերությունների վերաբերյալ մեծագույն օրինակն ու ուսուցիչը Հիսուսն է: Նա կատարյալ օրինակ է ծառայում, թե ինչպես պետք է շփվենք մարդկանց հետ: Նոր Կտակարանի առաջին չորս գրքերը կարդալիս Հիսուսից սովորելու մի քանի տարբեր ձևեր կտեսնես:

Նրա ուսուցումները մարդկանց հետ շփվելու հզոր ճշմարտություններ են պարունակում:

12 աշակերտների հետ Նրա փոխհարաբերությունները մեր մտերիմների հետ շփվելու գործնական օրինակներ են:

Աստվածաշունչը մեզ մի քանի օրինակներ է տալիս, թե ինչպես էր Հիսուսը վերաբերվում Իր ընտանիքի՝ ծնողների, եղբայրների ու քույրերի հետ:

Հիսուսը նաև բազմաթիվ օրինակներ է ներկայացնում, թե ինչպես էր Նա վերաբերվում մարդկանց՝ հարուստների, մուրացկանների, բորոտների, կույրերի կամ անառակների հանդեպ: Այդ բոլոր դեպքերում դու կտեսնես, որ Հիսուսը բոլորի հետ վերաբերվում էր նույն հարգանքով, սիրով և բարությամբ:

Եթե դու ուզում ես իմանալ, թե ինչ է Աստված կամենում տեսնել մարդկանց հետ քո փոխհարաբերությունների մեջ, նայի՛ր Հիսուսի կյանքին: Նա լավագույն օրինակն է, Ում կարող ես հետևել:

Գլուխ 2.

Ընկերության չորս տեսակներ

Մենք ոմանց ավելի շատ ենք սիրում, քան մյուսներին: Սա գուցե նորմալ է: Դու կարող ես շատ ընկերներ ունենալ և կարող ես տարբեր ընկերներ ունենալ: Ահա չորս տեսակի ընկերության վերաբերյալ մի քանի մտքեր: Քո ընկերների մեծ մասին դու հավանաբար կարող ես դասել այս խմբերից մեկի շարքին:

Ավելի հանգամանորեն դիտարկենք ընկերության չորս տեսակները: Դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ համառոտ նկարագրություն է տրված: Որից հետո գալիս է բացատրություն, թե ինչ ազատություններ ունես այդ մակարդակի ընկերության մեջ: Վերջում կա նկարագրություն առ այն, թե ինչ պատասխանատվություններ ունես տվյալ ընկերության հանդեպ:

Այո, եթե դու ցանկանում ես ուրիշների համար լավ ընկեր լինել, ապա պետք է որոշակի պարտավորություններ ստանձնելու համար պատրաստակամ լինես: Նաև՝ որտեղ կան ազատություններ, այդ ազատությունների հետ միասին կան նաև հատուկ պատասխանատվություններ:

Այս հատվածում տեղ գտած մտքերի մեծ մասը հիմնված են Institute in Basic Life Principles Seminar-ի նյութերի վրա: Մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում այն ազդեցության համար, որ այդ համագումարն ունեցավ նշված գրքի վրա աշխատողների նկատմամբ:

Ա. Ծանոթներ:

Այս խումբը գուցե լինի ամենամեծը և մարդկանց ամենամեծ բազմազանությունն ունենա: Ծանոթների հետ փոխհարաբերություններում շատ քիչ նվիրվածություն է պահանջվում:

1. Նկարագրություն:

Դու երբեմն ես հանդիպում այդ մարդու հետ: Դու գիտես նրա անունը:

2. Քո ազատությունները:

Դու ազատ կարող ես ընդհանուր հարցեր տալ: Հարցեր, որոնք վերաբերում են ընդհանուր տեղեկություններին. «Ի՞նչ է անունդ: Որտե՞ղ ես ապրում: Որտե՞ղ ես սովորում, աշխատում»:

3. Քո պատասխանատվությունները:

«Ես սիրում եմ նոր մարդկանց հանդիպել,- ասում է Թովմասը,- ես իմ առաջ նպատակ եմ դրել՝ գնահատել ցանկացած անձնավորության, ում 10 րոպեից ավելի երկար եմ ճանաչում»:

Թովմասը իր վրա պարտավորություն է վերցրել դրական ազդեցություն թողնել ցանկացած մարդու վրա, ում հետ նոր է ծանոթացել: Նա նպատակ չունի նրանց բոլորի հետ մտերմանալու, որովհետև դա գործնականում հնարավոր չէ: Սակայն նա փորձում է յուրաքանչյուր նոր ծանոթության դեպքում ինչ-որ դրական բան թողնել տվյալ անձնավորության կյանքում: Դա կարող է լինել շատ հասարակ մի բան, օրինակ՝ խոսելիս ուշադրությունը նրան դարձնելը, աչքերի մեջ նայելը և անկեղծ հետաքրքրություն ցույց տալը այն իմաստով, որ հանդիպել է նրան և ցանկանում է նրան ավելի լավ ճանաչել:

Քո ծանոթների հետ հանդիպումն ընդունի՛ր որպես «աստվածային հանդիպում»: Մարդկանց հանդիպելը կարող է հաճելի փորձություն լինել, եթե գիտակցես, որ միգուցե Աստված է նրանց բերել քո կյանք, որպեսզի դու նրանց համար օրհնություն լինես: Բայց և այնպես, սա չի նշանակում, որ ցանկացած ընկերություն առողջ ընկերություն է: Որոշ մարդիկ կարող են փորձել՝ քեզ հեռացնել Աստուծուց:

Այդ տեսակի վատ ընկերությունից ինքդ քեզ պաշտպանելու համար դու պետք է Աստծուն ներգրավես քո ընկերության մեջ: Նախքան որևէ մեկի հետ ընկերությունը խորացնելը, դու պետք է համոզված լինես, որ քո դրդապատճառները մաքուր են:

Դու կարիք ունես ընդհանուր հարցեր մշակելու, որոնք կարող ես օգտագործել ծանոթների հետ զրուցելիս: Այդ հարցերը չպետք է դիմացինին անհանգստություն պատճառող լինեն: Դրանք նաև չպետք է վերաբերեն մարդու անձնական կյանքի ներքին հարցերին:

Ծանոթների խումբը հավանաբար կլինի քո ընկերների ամենամեծ խումբը: Դու կարող ես հեշտությամբ 100 և ավելի ծանոթներ ունենալ: Նոր մարդկանց հանդիպելիս ճիշտ արձագանքելու ձևը կլինի հետևյալը.

- Հետաքրքրություն ցուցաբերել նրանց հանդեպ:
- Ընդունել նրանց այնպիսին, ինչպիսին կան:
- Քո քայլերով ու խոսքերով ցույց տալ, որ տվյալ անձնավորությունը կարևոր է քեզ համար, և դու գնահատում ես այդ ընկերությունը:
- Լինել լավ լսող: Փորձել տեսնել, թե ինչ է Աստված անում նրա կյանքում:

Բ. Պատահական ընկերներ:

Պատահական ընկերությունը մի փոքր ավելի լրջություն է պահանջում, քան ծանոթությունը: Հիմա, երբ արդեն ծանոթացել ես տվյալ մարդու հետ, կարող ես որոշել, թե արդյո՞ք ուզում ես նրան ավելի լավ ճանաչել, բարձրացնել այդ ընկերությունը հաջորդ մակարդակ: Սա որոշակի հիմք է պահանջում, մի բան, որի վրա կարող ես կառուցել ընկերության այս տեսակը:

1. Նկարագրություն:

Այսպիսի ընկերությունը հիմնվում է ընդհանուր հետաքրքրությունների և գործունեության վրա, որ նրանք կհսում են: Օրինակ, դուք երկուսդ էլ սիրում եք բասկետբոլ, թենիս կամ ձիարշավ: Երկուսդ էլ սիրում եք նույն աշխատանքը, կամ ունեք նույն նախասիրությունները: Դուք ունեք որոշակի ընդհանուր հետաքրքրություններ, դրանից էլ հնարավոր է դառնում ձեր ոչ մտերիմ ընկերությունը:

2. Քո ազատությունները:

Դու կարող ես կոնկրետ հարցեր տալ, օրինակ՝ հարցնել նրանց կարծիքը որոշ երևույթների կամ կյանքում նրանց ունեցած նպատակի վերաբերյալ:

3. Քո պատասխանատվությունները:

Դու պետք է նրա մեջ դրական կողմեր փնտրես: Ի՞նչ դրական որակներ կամ բնավորության գծեր ես տեսնում նրա կյանքում: Տե՛ս Փիլիպպեցիներին 4:8-9-ը:

Դու պետք է սովորես ճիշտ հարցեր տալ: Ուշադիր լսի՛ր և տո՛ւր հարցեր, որոնք կապ ունեն քո ընկերոջ հետաքրքրությունների հետ:

Դու կարող ես ունենալ սովորական ընկերներ: Շատ դեպքերում ընդհանուր հետաքրքրությունը, որ դուք երկուսդ էլ ունեք, կարող է լինել այն, որ երկուսդ էլ հավատացյալ եք: Միայն այս պատճառը բավական է սովորական ընկերություն սկսելու համար:

Գ. Մոտիկ ընկերներ:

Մոտիկ ընկերները նվիրվածություն են պահանջում, այնպես որ դու պետք է լավ մտածես այդպիսի ընկերություն զարգացնելիս: Այդ ընկերությունը միանշանակ ավելի բարձր մակարդակի է, քան սովորական ընկերությունը: Մոտիկ ընկերները կարող են ուրախության իրական պատճառ լինել:

Եթե դու ուզում ես մոտիկ ընկերություն սկսել, որ այն քո կյանքի վրա իրոք դրական ազդեցություն ունենա, այդ դեպքում համապատասխան ընկերներ ընտրելիս պետք է շատ ուշադիր լինես: Եթե նրանց արժեքները հստակորեն տարբերվում են քո արժեքներից, ապա նման անձնավորությունը կարող է քեզ տանել մի ուղիով, որը կհեռացնի Աստուծուց:

Երբ հարցը վերաբերում է մոտիկ ընկերներ ընտրելուն, ապա դու պետք է Աստծուն բերես այդ որոշման կայացման ընթացքի մեջ: Արդյո՞ք այդ անձնավորությունը խորապես որոշել է հետևել Հիսուսին: Եթե դու վստահ չես, թե ինչ փոխհարաբերություն ունի նա Աստծո հետ, քո կողմից խելամիտ կլինի այդ ընկերությունը պահել սովորական ընկերության մակարդակի վրա, մինչև որ համոզվես Աստծո հանդեպ նրա սիրո հարցում:

1. Նկարագրություն:

Այս ընկերությունը հիմնված է կյանքի նմանատիպ նպատակներ ունենալու վրա: Մոտիկ ընկերները թվով քիչ են՝ 5, 10 կամ 15:

2. Քո ազատությունները:

Դու ազատ կարող ես կազմել գործողությունների ծրագիր, որը կօգնի երկուսիդ էլ: Դա մի բան է, որի շուրջ երկուսդ էլ համաձայն եք: Մի՛ հարկադրիր քո խորհուրդները նրան: Տե՛ս Գաղատացիներին 6:2-ը:

Ձեր ընկերության խորությունը կապ ունի այն բանի հետ, թե արդյո՞ք դիմացինը ցանկություն ունի զարգացնելու այն: Դու չես կարող ասել՝ «Նա իմ մոտիկ ընկերն է» այն դեպքում, երբ նա ասում է՝ «Դու իմ ծանոթն ես»: Եթե ամուր ընկերություն ես ուզում, ուրեմն երկուսդ էլ նույն ձևով պետք է տեսնեք դա:

3. Քո պատասխանատվությունները:

Մոտիկ ընկերությունը ժամանակի ներդրում է պահանջում քո կողմից, եթե ուզում ես, որ այդ ընկերությունը լինի իսկական և հարատև: Այս մակարդակի ընկերությունը պահանջում է անկեղծություն և սրտաբացություն:

Քաջալերի՛ր նրան: Կարդա՛ Առակաց 12:25-ը:

Ծրագրե՛ք գործողություններ՝ մեկդ մյուսին օգնելու համար:

Մոտիկ ընկերությունը չի սկսվում այսօր և հաջորդ օրն ավարտվում: Այն խորություն ունի: Քո մոտիկ ընկերները պետք է քո կողքին կանգնած լինեն և՛ լավ ժամանակ, և՛ դժվարության պահին:

Դ. Մտերիմ ընկերներ:

Այսպիսի ընկերությունը սեռական փոխհարաբերություններ նկարագրելու համար չէ: Մտերմությունը սեքսի մասին չէ, այլ փոխհարաբերությունների խորության: Դու կարող ես մտերիմ ընկեր լինել թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց հետ: Դու կարող ես մտերիմ ընկեր լինել քո հոր կամ մոր հետ, քո եղբոր կամ քրոջ հետ կամ ընտանիքի հետ կապ չունեցող մեկի հետ:

Լավագույն մտերիմ ընկերը, որ դու կարող ես ունենալ, Աստված Ինքն է: Մեկ րոպե հատկացրո՛ւ՝ տեսնելու համար, թե Բ Կորնթացիների մեջ ինչ է Պողոսն ասում մեզ Աստծո ցանկության մասին: Այն ցանկության, թե մեզնից ամեն մեկը ինչպիսի անձնական փոխհարաբերություն պետք է ունենա Աստծու հետ:

Բ Կորնթացիներին 13:14.

«Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծո սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ բոլորիդ հետ լինի: Ամեն»:

Այո՛, Աստված ուզում է, որ դու փոխհարաբերություններ ունենաս մարդկանց հետ, բայց ընկերության հարցում սովորելու լավագույն ձևն Աստծո հետ մտերիմ փոխհարաբերություններ զարգացնելն է: Աստված ամենաապահով փոխհարաբերությունն է, որը դու երբևէ կարող ես ունենալ:

1. Նկարագրություն:

Մարդիկ երբեմն «ամենալավ ընկեր» արտահայտությունն են օգտագործում՝ նկարագրելու համար այս տեսակի փոխհարաբերությունները:

Մտերիմ ընկերությունը շատ ավելի խորը նվիրվածություն է պահանջում, քան մոտիկ ընկերությունը: Այս ընկերությունը հիմնված է միմյանց բնավորությունները զարգացնելու որոշման վրա: Շատ կան մարդիկ, ովքեր ոչ մի մտերիմ ընկեր չունեն: Մտերիմ ընկերությունն առանձնահատուկ է, յուրատիպ: Դու, հնարավոր է, միաժամանակ ունենաս 1 կամ 2 մտերիմ ընկեր:

Մտերիմ ընկերության համար պահանջվում է, որպեսզի երկու անձնավորությունն էլ այս մակարդակի շփում ցանկանան: Եթե նույնիսկ դու ցանկանում ես ինչ որ մեկի մտերիմ ընկերը լինել, դա տեղի չի ունենա, եթե դիմացինը նույն տեսակի ընկերություն չի ուզում:

2. Քո ազատությունները:

Դուք ազատ եք մեկը մյուսին ուղղելու (ոչ թե քննադատելու) հարցում: Այս ազատությունը կարող է հեշտությամբ չարաշահվել: Ուղղելու քո կարողությունը կենտրոնացրո՛ւ նրա «կույր հատվածների» վրա: «Կույր հատվածն» այն խնդիրն է, որի վերաբերմամբ մարդը չի գիտակցում, որ ունի:

3. Քո պատասխանատվությունները:

Այս տեսակի փոխհարաբերությունները պահանջում են խոցելի լինել: Դու պետք է բաց և անկեղծ լինես: Բայց ուշադի՛ր եղիր: Դու պետք է «ճշմարտությունը խոսես սիրով» (Եփ. 4:15):

Դրական խորհուրդնե՛ր տուր: Մի՛ քննադատիր: Տե՛ս Առակաց 12:26-ը: Բա՛ց եղիր խորհուրդ և հանդիմանություն ընդունելիս:

Դու պատասխանատվություն ունես՝ մաքրություն պահպանել այս փոխհարաբերություններում: Հաջորդ գլխում մենք կխոսենք սահմանների, և դրանց կարևոր տեղի մասին, որ ունեն մարդկանց հետ դրական փոխհարաբերություններ զարգացնելու և պահպանելու մեջ:

Դու պետք է ժամանակ ներդնես այսպիսի փոխհարաբերությունների մեջ: Հաղորդակցությունն առանցքային է մտերիմ ընկերություն զարգացնելու և պահպանելու հարցում: Մտերիմ ընկերությունն ինքն իրեն չի զարգանում, ոչ էլ ակնթարթորեն է ձևավորվում:

Եթե ամուսնացած ես, դու պատասխանատվություն ունես՝ օգնել քո կողակցին, որ նա էլ ընկերություն զարգացնի քո մտերիմ ընկերոջ հետ: Հնարավոր է, որ քո կողակցիցը երբևէ մտերիմ փոխհարաբերություն չունենա քո լավագույն ընկերոջ հետ, սակայն եթե նրանց մեջ ընդհանրապես ոչ մի տեսակի ընկերություն չլինի՝ որևէ մակարդակի վրա, ապա հնարավոր է՝ խնդիրներ առաջանան ձեր ամուսնական փոխհարաբերության մեջ:

Մտերիմ ընկերությունն ինքնըստիներքյան չի շարունակվի ողջ կյանքի ընթացքում: Այն պահանջում է ժամանակի և ջանքի ներդրում, որպեսզի այս կարգի փոխհարաբերություններն ավելի խորանան: 3-րդ գլխում մենք կուսումնասիրենք առողջ ընկերություն կառուցելու մի քանի առանցքային կետեր: Շատ դժվար է մտերիմ ընկեր լինել մեկի հետ, ով չգիտի, թե ինչպես մարդկանց հետ առողջ ընկերություն անի: Դա վերաբերում է նաև քեզ:

Եթե դու մտերիմ ընկերություն անես մեկի հետ, ով առողջ է, ապա կզգաս այս տեսակի առողջ ընկերության օգուտները, որը շատ ավելին է, քան պատահական կամ երևակայական ընկերությունը:

Եզրակացություն:

Անձնական ընկերություն զարգացնելը քո կյանքի շատ կարևոր մաս է: Աստված ուզում է, որ դու ընկերներ ունենաս, դրանով հարստացնես քո կյանքը և ավելի մոտենաս Աստծուն: Եթե դու թույլ տաս Աստծուն, որ քեզ օգնի քո կյանքի այս ասպարեզում, Նա քեզ կօգնի՝ գտնել այնպիսի մարդկանց, ովքեր կարող են ճշմարիտ ընկերներ լինել քեզ համար: Դու նրանց հետ ապահով և առողջ ընկերություն կունենաս, որը կհարստացնի քո կյանքը:

Ծանոթներ ունենալը շատ քիչ ջանք է պահանջում: Սակայն ընկերության հաջորդ երեք մակարդակներից յուրաքանչյուրում աճող մարտահրավերներ ու պատասխանատվություններ կան, որոնց դու կհանդիպես, եթե ուզում ես հաջողակ լինել այդ մակարդակի ընկերություն ձևավորելու հարցում:

Հաջորդ գլխում մենք կքննարկենք հիանալի ընկերություն կառուցելու ուղիները:

Գլուխ 3.

Ինչպե՞ս կառուցել հիանալի ընկերություն

Դու վերցնո՞ղ ես, թե՞ տվող: Եթե ուզում ես հիանալի ընկերություն կառուցել, ապա պետք է սովորես մյուսների համար լավ ընկեր լինել: Ավելին, դու պետք է նաև սովորես, թե ինչպես ընտրել լավ ընկերներ: Մեր աշխարհում շատ կան անատող մարդիկ, որոնց մեծ մասն ունեն լավ արտաքին և հմայիչ անհատականություն: Մակայն լավ ընկեր լինելու համար ավելին է պահանջվում, քան պարզապես լավ տեսքն ու հմայքը:

Դու պետք է սովորես արտաքինից այն կողմ նայել և տեսնել դիմացինի սիրտը՝ բնավորությունը, արժեհամակարգը:

Դու նաև պետք է սահմաններ զարգացնես, որոնք քեզ կօգնեն պաշտպանվել այնպիսի մարդկանցից, ովքեր քո կյանքի մեջ վնաս բերելու հավանականություն ունեն:

Ուրեմն, որտեղի՞ց պետք է սկսել հիանալի ընկերություն զարգացնել: Սկսի՛ր քեզնից:

Ա. Սկսի՛ր քեզնից:

Եթե դու հիանալի ընկերներ ես ուզում ունենալ, ապա ի՛նքդ պետք է լինես մի անձնավորություն, ով կարող է մյուսների համար հիանալի ընկեր լինել: Եթե դու ասես՝ «Ես չեմ կարող երջանիկ լինել, եթե տվյալ անձնավորությունն իմ ընկերը չլինի», ուրեմն դու լավ ընկեր լինելու համար այնքան էլ լավ թեկնածու չես: Դու պետք է երջանիկ, ապահով և հասուն անձնավորություն լինես: Դու պետք է իմանաս, թե ինչպես կարելի է կյանքում ուրախություն գտնել, և պատրաստ լինես այդ ուրախությունը մյուսների հետ կիսելու:

1. Ի՞նչ բժշկություն է պետք քո կյանքում:

Մինչև հիմա քո ունեցած փոխհարաբերությունները, հնարավոր է, խորը վնաս են հասցրել քո կյանքին: Եվ գուցե դու ապրել ես քո ընտանիքի անդամների հասցրած վերքերով, որոնք վատ են վերաբերվել քեզ հետ: Կամ դու մեծացել ես այնպիսի ընտանիքում, որտեղ քեզ անտեսել են, և դու չես զգացել սեր, կարեկցանք և մյուս վերաբերմունքները, որոնք անհրաժեշտ են մարդկանց հետ առողջ փոխհարաբերություններ կառուցելու համար:

David Seamands, «Healing for Damaged Emotions» գրքում կա գործնական ուղեցույց, թե ինչպես ազատագրվել անցյալից եկող ցավոտ ազդեցություններից: Կա նաև այս գրքի աշխատանքային տետրը: Մա կարող է քեզ համար շատ օգտակար լինել՝ հարթելու համար անցյալից եկող քո վիրավորանքները, որոնք առաջացել են վատ փոխհարաբերությունների պատճառով:

Քո անցած կյանքի մեկ այլ ասպարեզ, որը կարող է բուժման կարիք ունենալ, այն է, որ դու ներգրավված ես եղել որևէ կախվածության կամ կյանքը կառավարող այլ խնդրի մեջ: Եթե դա եղել է թմրամոլություն, խաղամոլություն, որկրամոլություն, բարկության խնդիր, դեպրեսիա, համակախվածություն կամ կյանքը կառավարող այլ խնդիր, ապա դրանք բոլորն էլ այսօր և ողջ կյանքիդ ընթացքում ազդել են մարդկանց հետ առողջ փոխհարաբերություններ կառուցելու քո կարողության վրա:

Այդ վնասներից մի մասը, հնարավոր է, քեզ համար տեսանելի չէ, բայց իրական է և կշարունակի վնասել քո կյանքը, մինչև դու օգնություն չգտնես այդ խնդիրները լուծելու համար: Դու մեկ ուրիշի օգնության կարիքը կունենաս, օրինակ՝ խորհրդատուի, խնամակալի կամ հասուն ընկերոջ, ովքեր կարող են քեզ օգնել, որ տեսնես, թե քո կյանքի ո՞ր ասպարեզներն են կրում քո անցյալի վնասները և ինչ բուժման կարիք ունեն:

Պարզ ձևով անցյալն անտեսելը քեզ մյուսների համար հիանալի ընկեր չի դարձնի: Մյուս կողմից՝ եթե դու անընդհատ զբաղվես քո անցյալի վնասներով, դրանք կշարունակեն խառնաշփոթ բերել քո փոխհարաբերությունների մեջ ապագայում: Անցյալի վնասին անդրադառնալը կարող է այնքան էլ հաճելի գործ չլինել, սակայն քեզ համար դա կենսական նշանակություն ունի, եթե դու ուզում ես Աստծուն հաճելի անձնավորություն դառնալ: Կարիք չկա մնացած ողջ կյանքի ընթացքում կրել անցյալի վնասները: Աստված բժշկություն կբերի քո կյանքի բոլոր ասպարեզներում, և դու կկարողանաս արձագանքելու նոր ձևեր սովորել: Դու կազատագրվես քո անցյալի հասցրած վնասից: Աստված կարող է բուժել անցյալում ստացած քո ցավերը և քեզ դարձնել այնպիսի անձնավորություն, ով մյուսների համար հիանալի ընկեր կլինի:

2. Ինչքա՞ն ամուր է Հիսուսի հանդեպ քո նվիրվածությունը:

Եթե ուզում ես հիանալի ընկերություն ունենալ մարդկանց հետ, ապա ամենակարևորը Հիսուսի հետ ընկերություն սկսելն է: Եթե խնդրել ես, որ Հիսուսը դառնա քո կյանքի առաջնորդը, ապա դու պետք է Նրան հնարավորություն տաս, որ ընկերներ ընտրելու հարցում առաջնորդի քեզ: Սա չի նշանակում, որ դու երկնքից եկող բարձրագույն ձայն կլսես, որը կասի. «Ընտրի՛ր նրան՝ որպես քո ընկերոջ»:

Քեզ ընդամենն անհրաժեշտ է սա դարձնել աղոթքի լուրջ թեմա: Դիմի՛ր Աստծո օգնությանը: Ասա՛ Նրան, որ ուզում ես, որ Նա քեզ առաջնորդի ընկերների ընտրության հարցում: Եթե քո ներկայիս ընկերներից մեկը չի համապատասխանում Նրա չափանիշներին, ապա դու չես շարունակի այդ ընկերությունը:

Շատ հեշտ է ասել. «Ես գիտեմ, թե ինչ է ինձ պետք: Ես ինքս կընտրեմ իմ ընկերներին»: Բայց որքա՞ն լավ ես դու ճանաչում այն անձնավորությանը, որի հետ ուզում ես ընկերանալ: Ո՞վ է իրականում ավելի լավ ճանաչում նրան: Իհա՛րկե, Հիսուսը: Նրանից ոչ մի բան ծածուկ չէ: Նա գիտի ամեն բան, որ այդ անձնավորությունը խոսել է, ամեն միտք, որ նա մտածել է: Հիսուսը նաև կարող է տեսնելով թափանցել նրա սիրտը, գիտի, թե ինչ է իրականում կատարվում այդ անձնավորության ներսում: Այնպես որ դու կարող ես լիարժեք վստահել Հիսուսին: Նա կատարելապես գիտի ամեն բան: Եվ Նա կարող է քեզ օգնել, որ դու կայացնես լավագույն որոշումը, երբ հարցը վերաբերի ընկերներ ընտրելուն:

Իրականում հիանալի ընկերությունն այն ընկերությունն է, որն օգնում է քեզ ավելի մոտենալ Աստծուն, ոչ թե հեռանալ Նրանից: Եթե քո գլխավոր առաջնահերթությունը Աստծուն ավելի մոտենալն է, ապա քեզ անհրաժեշտ է թույլ տալ Հիսուսին, որպեսզի Նա օգնի քեզ ընկերներ ընտրելիս:

3. Որքա՞ն հասուն ես դու:

Հիանալի ընկերության մեծագույն թշնամիներից մեկը հասուն չլինելն է: Սա հանդիպում է բոլոր տարիքներում: Ինչպե՞ս կարող ես իմանալ, որ դու հասուն անձնավորություն ես: Խոսքը չի վերաբերում նրան, թե դու ինչքան լավ կկարողանաս թաքցնել քո հասուն չլինելը:

«The Life Model: Living from the Heart Jesus Gave You» գրքում հեղինակներն առաձնացրել են մի քանի կարևոր քայլեր, որոնք դու պետք է անցնես քո կյանքի յուրաքանչյուր փուլում: Երբ դու ձեռք բերես այդ հմտությունները, ուրեմն արդեն հասունության ճանապարհին ես: Եթե չկարողանաս հաղթահարել այդ աստիճանները քո կյանքի որոշակի փուլերում, կկրես հասուն չլինելու վնասները: Դու քո կյանքում կկրես բացասական տարբեր հետևանքներ, որոնք ավելի տեսանելի կլինեն, երբ հարցը վերաբերի մարդկանց հետ անձնական փոխհարաբերություններ զարգացնելուն:

Օրինակ, երեխաներն իրենց կյանքի առաջին 12 տարիների ընթացքում պետք է ձեռք բերեն որոշակի հմտություններ, որոնք նրանց կօգնեն սովորել, թե ինչպես ընդունեն իրենք իրենց, հոգ տանեն իրենց մասին ու բավարարեն իրենց կարիքները: Այս հմտությունները ձեռք բերելուց հետո նրանք պատրաստ կլինեն առաջ անցնել հաջորդ մակարդակ և սովորել, թե ինչպես հոգ տանեն արդեն ուրիշների համար:

Հաջորդ մակարդակում կան նոր հմտություններ, որոնք դու կարիք ունես սովորելու: Այս հմտությունները քեզ կօգնեն գտնվել մի ուղու վրա, որտեղ կկարողանաս մարդկանց հետ լավ փոխհարաբերություններ ունենալ: Սակայն եթե դու չկարողանաս ձեռք բերել ինքդ քեզ հոգ տանելու հմտությունները, ապա ի վիճակի չես լինի ձեռք բերել հաջորդ մակարդակի համար անհրաժեշտ հմտությունները: Եթե անգամ դու կենսաբանորեն մեծանաս, դեռևս կշարունակես ներքուստ տառապել ոչ հասունության պատճառով, որովհետև չկարողացար սովորել ինքդ քեզ հոգ տանելու հմտությունները:

Եթե դու շարունակ նեղսրտում ես, որ քո սեփական կարիքները չեն բավարարվել, ուրեմն այնքան էլ պիտանի չես լինի լավ ընկեր լինելու համար: Դու կլինես վերցնող, ոչ թե տվող: Փոխադարձ բավարարող ընկերությունը քո կյանքում քեզ համար կլինի երևակայություն, այլ ոչ թե իրականություն:

Միգուցե սա զարմացնի քեզ, սակայն Աստված շատ հստակ ռազմավարություն է առաջարկում, որը քեզ կառաջնորդի, որ դառնաս հասուն անձնավորություն Աստծո տեսակետից:

Հակոբոս 1:2-4.

«Եղբայրներ՝ րս, երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք, այդ բոլորն ուրախություն համարեցե՛ք, իմանալով, որ ձեր հավատի փորձությունը համբերություն է առաջ բերում: Սակայն համբերությունը թող կատարյալ արդյունք ունենա, որպեսզի կատարյալ և ամբողջական լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք»:

Երբ քո կյանքում խնդիրներ են առաջ գալիս, և սովորում ես դրական ձևով արձագանքել դրանց՝ օգտագործելով Աստծո իմաստությունն ու գորությունը, դու տոկունություն ես ձեռք բերում: Եթե դու շարունակես ընթանալ այս ուղիով, Աստված խոստանում է, որ դա այն ճանապարհը կլինի, որ քեզ կդարձնի «ոչ մի բանի պակասություն չունեցող կատարյալ և ամբողջական անձնավորություն»:

Եթե դու սովորես ապրել ըստ Հակոբոս 1:2-4-ի ճշմարտությունների, ապա կդառնաս այնպիսի անձնավորություն, ով հիանալի ընկեր կլինի մյուսների համար: Ինչքան դու շատ նվիրվես Հիսուսին հետևելուն, այնքան ավելի լավ ընկեր կլինես մյուսների համար:

4. Սովորի՛ր անկեղծորեն հոգ տանել մյուսների համար:

Հիանալի ընկերության բանալին այն է, որ սովորենք, թե ինչպես անկեղծորեն հոգ տանել մյուսների համար: Ինչպե՞ս կարելի է սովորել դա անել: Մերն է ցանկացած հիանալի ընկերության հիմքը: Մենք այստեղ չենք խոսում ռոմանտիկ սիրո մասին: Այս տեսակի սերը բնութագրված է Ա Կորնթացիներին 13-րդ գլխում:

Ա Կորնթացիներին 13:4-7

«Մերը համբերող է, բարի է, սերը չի նախանձում, սերը չի գոռոզանում, չի հպարտանում, անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտրում, հեշտությամբ չի գրգռվում, չար բան չի մտածում, անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտության համար, ամեն բան կրում է, ամեն բանի հավատում է, ամեն բանի հույս ունի, ամեն բանի համբերում է»:

Դու պետք է կարողանաս տեսնել՝ քեզ համար ինչ-որ բան ստանալուց այն կողմ: Հիսուսը հիանալի օրինակ է, թե ինչպես կարելի է դա անել: Նա անկեղծ հոգատարություն ցուցաբերեց Իրեն հանդիպած մարդկանց հանդեպ, նույնիսկ եթե նրանք աղքատ էին, մուրացիկ, բորոտ, կույր կամ հասարակությունից մերժված: Նա նրանց հարգանքով վերաբերվեց և անկեղծ սեր ցույց տվեց: Նա չէր հարցնում. «Ի՞նչ կարող եմ ես քեզնից ստանալ»: Ընդհակառակը, Նա հարցնում էր. «Ի՞նչ կարող եմ քեզ տալ: Ինչպե՞ս կարող եմ քեզ օգնել»:

Բ. Ի՞նչ սահմանների կարիք ունեմ ես իմ փոխհարաբերությունների մեջ:

Եղե՛լ է, որ ընկնես փորձանքների մեջ՝ սխալ ընկեր ընտրելու կամ ընկերոջ ճնշման պատճառով:

Ուսումնասիրենք երկու տարբեր բնավորության մարդկանց, որից հետո դու կորոշես, թե դրանցից որի հետ կցանկանայիր փոխհարաբերություն ունենալ:

Տարբերակ 1. Այս մարդն իր վարքուբարքով դրսևորում է պատասխանատվություն, ինքնակառավարում, ազատություն, սեր:

Տարբերակ 2. Այս մարդն անպատասխանատու է, շահագործող, մյուսներին վերահսկող, անկառավարելի:

Նրանցից որի^օ հետ դու կցանկանայիր ընկերություն անել: Դժվար չէ որոշելը, այնպես չէ^օ:

Ի՞նչ տարբերություն կա այս երկու մարդկանց միջև:

Սահմանները:

1-ին տարբերակի մարդիկ սովորել են սահմանների մասին և դրանք դարձրել են իրենց կյանքի կարևոր մասը:

2-րդ տարբերակի մարդիկ ապրում են առանց առողջ սահմանների:

Ավելի խոր ուսումնասիրություն սահմանների վերաբերյալ

Մի քանի հրաշալի գրքեր կան գրված Dr. Henry Cloud-ի և Dr. John Townsend-ի կողմից՝ սահմանների այս թեմայի վերաբերյալ: Այդ գրքերից շատերն ունեն նաև աշխատանքային տետրեր: Դրանք բոլորը հրատարակված են Zondervan-ի կողմից:

Սահմաններ. ե՛րբ ասել՝ այո, ինչպե՛ս ասել՝ ոչ՝ քո կյանքը վերահսկելու համար:

Սահմաններ ամուսնության մեջ:

Սահմաններ հակառակ սեռի հետ շփումների մեջ:

Սահմաններ երեխաների հետ:

Սահմաններ դեմ առ դեմ. ինչպես ունենալ այն դժվարին խոսակցությունը, որից դու խուսափում ես:

Փոփոխություններ, որոնք բուժում են. ինչպե՛ս հասկանաս քո անցյալը՝ ավելի առողջ ապագա երաշխավորելու համար:

Հեղինակ՝ դր. Հենրի Քլաուդ

1. Ի՞նչ է սահմանը:

Սահմանը կանոն է կամ չափանիշ, որը դու քո կյանքում դնում ես քո առջև: Ուրիշ մարդիկ նույնպես կարող են սահմաններ դնել քեզ համար: Քո արձագանքն այդ սահմաններին ցույց է տալիս, թե որքանով ես դու ապահով անձնավորություն:

Գուցե դու լսել ես, թե ինչպես է մի երիտասարդ տղա ասում երիտասարդ աղջկա մասին, ում հետ նա հանդիպում է. «Երբ նա ասում է՝ «ոչ», իրականում նկատի ունի՝ «այո»»: Այդ երիտասարդ տղան հարգանքի պակաս է դրսևորում աղջկա հանդեպ և վերահսկողությունից դուրս է. մի մարդ է, ով սահմաններ չունի:

Քո կյանքում եղած սահմանները կարող են դասակարգվել չորս ընդհանուր տեսակների մեջ:

ա. Ֆիզիկական սահմաններ:

Այս սահմանները որոշում են, թե ինչին ես դու առնչվելու, և ով և ինչպես կարող է քեզ առնչվել: Օրինակ՝ ես չեմ գնի և չեմ նայի պոռնոգրաֆիական ֆիլմ կամ ամսագիր: Ես մարդկանց հետ կովի չեմ բռնվի: Ես կույս կմնամ մինչև ամուսնանալը:

Մի երիտասարդ կորցրեց իր կնոջը ցավալի վթարի պատճառով: Երկու տարի անց նա սկսեց հանդիպել մի կնոջ հետ՝ նպատակ ունենալով նորից ամուսնանալ: Այդ հանդիպումների արդյունքում նրանք ամուսնացան: Սակայն հաշվի առնելով իր նախկին ամուսնությունն ու ներկա ամուսնության ընթացքում տեղ գտած սիրո պատշաճ ֆիզիկական արտահայտությունները՝ նա անձնական սահման դրեց իր համար, որին հետևեց այդ հանդիպումների ընթացքում՝ որպես ամուրի: Նա որոշեց ոչ մի ֆիզիկական շփում չունենալ այդ կնոջ հետ՝ գրկախառնություն, համբույր կամ սիրո այլ ֆիզիկական արտահայտություն, քանի դեռ չէին ամուսնացել:

Աստվածաշունչն ասո՞ւմ է, որ պարտավոր են այդպես վարվել: Ո՛չ, սակայն սահմաններ դնելով՝ երիտասարդն ապահովեց իր նոր ընկերության մաքրությունը: Այս ձևով նա իր ապագա կնոջը հնարավորություն տվեց տեսնելու, որ ինքն իրեն կարողանում է կառավարել:

բ. Մտավոր սահմաններ:

Քո մտքերի համար դրված սահմանները վերաբերում են այն բանին, թե ինչ կմտածես դու: Մտային սահմանները կարող են պաշտպանություն ապահովել տարբեր տեսակի փորձություններից ու խնդիրներից: Օրինակ՝ «Ես չեմ մնա այս սխալ մտքերի մեջ», կամ էլ կարող են լինել որպես դրական սահման. «Ես կմտածեմ միայն ճիշտ բաների մասին»: «Ես վրեժխնդիր չեմ լինի այն մարդուց, ով լավ չի վարվել ինձ հետ»:

Մտային սահմանները շատ ուժեղ ազդեցություն են ունենում, թե ինչ ենք մենք ասում և անում: Որոշ մարդիկ կյանքի այսպիսի սկզբունք ունեն. «Նորմալ է ինչ-որ բանի մասին մտածելը, քանի դեռ իրականում ես դա չեմ արել»: Սակայն այս կարծիքը հակառակ է այն բանին, ինչ Աստված է մեզ ասում: Աստված ասում է, որ մտքով մեղքի մեջ ապրելը ճիշտ նույնպիսի մեղք է, ինչպես այդ մեղքը գործելը:

Դու կարիք ունես մտային սահմաններ դնելու, որոնք կհամապատասխանեն Փիլիպպեցիներին 4:8-ում նշված գործնական չափանիշին:

Փիլիպպեցիներին 4:8.

«Վերջապես, եղբայրներ՛ս, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ հարգանքի արժանի է, ինչ որ արդար է, ինչ որ մաքուր է, ինչ որ գեղեցիկ է, ինչ որ բարի համբավ ունի, ինչ առաքինություն և ինչ գովելի բան որ կա, դրանց մասին մտածեցե՛ք»:

Մտային սահմանները ցույց են տալիս, որ դու սովորել ես ինքդ քեզ կառավարել և կարող ես ապահով ընկեր լինել մյուսների համար:

գ. Չզացմունքային սահմաններ:

Դու ես միշտ պատասխանատու քո սեփական զզացմունքների համար: Երբ ասում ես՝ «Դու ինձ այնքան ես բարկացնում», իրականում ասում ես՝ «Ես ինքս ինձ չեմ կառավարում և պատասխանատու չեմ իմ զզացմունքների համար»: Երբ ուրիշներին ես մեղադրում քո զզացմունքային արձագանքների համար, դու բացահայտում ես, որ պատասխանատվություն չես կրում քո զզացմունքային սահմանների համար:

Չզացմունքային սահմաններ դնելու անկարողությունն այսօրվա շատ երիտասարդների մեծագույն թուլություններից մեկն է: Նրանցից ոմանք այս հարցում ձախողվում են, որովհետև իրենց ընտանիքներում նրանց չես սիրել, չեն գնահատել, անտեսել են: Մի՞թո պակաս զգալով՝ այս երիտասարդներից շատերը սխալ որոշումներ են կայացնում ընկեր ընտրելիս:

Շատ կարևոր է, որ սիրելու և սիրված լինելու քո փափազը պատճառ չդառնա քո սահմաններն անտեսելու և պատահական ընկերության հետևից գնալու համար: Շատերն են այսպես արտահայտվել. «Ես միշտ սխալ տեղերում եմ սեր փնտրել»: Այն փոխհարաբերությունները, որոնք քեզ հեռացնում են Աստծո դրած սահմաններից, կտանեն հիասթափության և կորստի:

Առողջ զզացմունքային սահմաններ ունենալ նշանակում է՝ թույլ չտալ, որ զզացմունքները որոշեն քո սահմանները: Դրա փոխարեն դու կարող ես Աստծո ճշմարտությունն օգտագործել սահմաններ դնելու համար, իսկ հետո քո զզացմունքները ստուգել ըստ այդ սահմանների:

Քո զզացմունքային սահմանների վերաբերյալ ճիշտ պատկերացում ունենալով՝ դու զգույշ կլինես, որպեսզի պատասխանատվություն չվերցնես ուրիշների զզացմունքային արձագանքների համար: Երբ մարդիկ քեզ մեղադրեն իրենց զզացմունքային իրավիճակի համար, դու պետք է նրանց մեղադրանքին պատասխանես առողջ արձագանքով: Սահմանների վերաբերյալ քո պատշաճ ընկալումը կարող է քեզ պաշտպանել, նույնիսկ եթե քո դիմացինը վարվում է առանց պատշաճ սահմանների:

Երբ դիմացինը բարկություն է արտահայտում քո հանդեպ, հենց այդ պահին դու ընտրության հնարավորություն ունես, թե ինչպիսին լինի քո զգացմունքային արձագանքը: Դու կարող ես արձագանքել բարկությամբ, կամ էլ կարող ես որոշել արձագանքելու քո զգացմունքային սահմանների միջակայքում՝ արձագանքելով Աստծո ուզածի պես:

դ. Հոգևոր սահմաններ:

Հոգևոր սահմաններն այն սահմաններն են, որոնք Աստված է քեզ տվել: Դրանք կենտրոնանում են Աստծո կամքի վրա՝ փոխանակ «իմ կամքի»: Աստվածաշնչում գտնվող Աստծո պատվերները հենց այդ սահմաններն են: Քո կյանքի որևէ գործունեության հետ կապված՝ Աստծո հատուկ կոչումը հոգևոր սահմանի մեկ այլ տեսակ է:

Ցավալի է, որ որոշ մարդիկ կորցրել են իրենց հետաքրքրությունն այն բանի հանդեպ, թե ինչ է Աստված ուզում, որ իրենք անեն: Նրանք փորձում են մարդկանց հետ ընկերություն անել՝ առանց Աստծո ասածները հաշվի առնելու, և արդյունքում կորցնում են իրենց կյանքի համար Աստծո նախատեսած լավագույնը:

«Ես կանեմ այն ամենը, ինչ Աստված ինձ կասի, որ անեմ». սա հրաշալի օրինակ է, թե ինչպես կարելի է այդպիսի սահմաններ հաստատել: Այսպիսի անձնավորությունն ապրում է այն համոզմունքով, որ Աստծո հետ ունեցած իր փոխհարաբերությունն ավելի կարևոր է, քան ցանկացած այլ փոխհարաբերություն:

Լևոնի անցյալը կապված էր թմրամոլության հետ, և նրա ընկերները նույնպես այդպիսի ապրելակերպ ունեին: Նա պատմում էր, որ Թին Չելենջն ավարտելուց հետո Աստված մոտ 10 տարի իրեն թույլ չէր տվել վերադառնալ իր հին ընկերների մոտ: Սա մի տեսակ հոգևոր սահման էր եղել նրա համար, որով Աստված պահպանել էր նրան վտանգից:

Եթե դու սահմանները հասկանաս այնպես, ինչպես Աստված է ուզում, որ հասկանաս, դու կդառնաս մի անձնավորություն, ով դրսևորում է պատասխանատվության զգացում, ինքնակառավարում, ազատություն և սեր:

2. Ինչպե՞ս կարող եմ սահմաններն օգտագործել իմ կյանքում:

ա. Ի՞նչ սահմանների կարիք ունեմ ես իմ կյանքում:

Ի՞նչ սահմանների կարիք ունես դու քո կյանքում: Այդ հարցին պատասխանելու համար պետք է անդրադառնաս քո կյանքի այն ասպարեզներին, որտեղ դու թուլություններ ունես, կամ խնդիրներ ես ունեցել: Օգտագործի՛ր սահմանները՝ որպես կանոններ քեզ համար, որոնք քեզ կպահեն այն ճանապարհի վրա, որով Աստված է ուզում, որ դու քայլես:

Այդ սահմանները կարող են վերաբերել այն բացասական վարքին, որից դու ուզում ես ազատվել: Կամ էլ կարող են վերաբերել դրական վարվեցողությանը, որը դու ուզում ես ներմուծել քո առօրյա կյանքի մեջ:

Եթե, օրինակ, բարկությունը կործանարար ուժ է եղել քո կյանքում, ապա դու պետք է ամուր սահման դնես այդ ասպարեզում: Եթե նախանձը քեզ համար երբևէ չի եղել լուրջ խնդիր, ապա գուցե ընդամենը փոքր սահմանի կարիք ունենաս քո կյանքի այդ ասպարեզում:

բ. Իսկ եթե ես շարունակում եմ ձախողվել:

Նայի՛ր այդ սահմաններին՝ որպես մի հանգամանքի, որը քեզ պահում է ապահով ուղու վրա: Մի ուղի, որով Աստված ուզում է, որ դու քայլես: Քեզ համար մի նեղ արահե՛տ պատկերի սարի կողքին, որի մյուս կողմում ձոր է: Եթե քո և ձորի միջև արգելող պատ կա, դու կխախտե՞ս այդ արգելքը: Ոչ, այդ արգելքը քեզ հետ է պահելու կործանումից:

Նույնն են անում լավ սահմանները քո կյանքում. նրանք քեզ հետ են պահում կործանումից, որը կարող է քեզնից գողանալ Աստծո՝ քեզ համար նախատեսած ապագան:

Սառան նստած էր իմ դիմաց՝ գրասեղանի մյուս կողմում: Նա անհանգիստ էր և խուսափում էր աչքերիս մեջ նայել: Նա սուտ խոսելու խնդիր ուներ, և անձնակազմն ուզում էր նրան դուրս հանել Թին Չելենջի կենտրոնից, որտեղ ես այդ ժամանակ տնօրեն էի: Բազմաթիվ անգամներ Սառան խախտել էր հետևյալ սահմանը. «Ես միշտ կասեմ ճշմարտությունը»:

Ես Սառային հարցրի, թե արդյո՞ք սուտ խոսելը նրա կյանքում խնդիր էր եղել նախքան Թին Չելենջ գալը: «Ես միշտ եմ սուտ խոսել», - պատասխանեց նա:

Ես նրան հարցրի. «Ի՞նչպիսի ես դու հիմա սուտ խոսում»:

Նա պատասխանեց. «Ես հիմա ստում եմ ընդամենը օրվա 10%-ը»:

Այսինքն, սա լուրջ առաջընթաց է՝ 100%-ից իջնել 10%-ի, սակայն, իհա՛րկե, այդքանն էլ դեռևս խնդիր է այն մարդկանց համար, ովքեր դեռ շարունակում են կրել այդ անձնավորության՝ թեկուզ 10% -ով ստի հետևանքներն ու նեղությունները: Բայց և այնպես, սա խոսում է առաջընթացի գոյության մասին:

Նույնիսկ եթե դու քո կյանքում հստակ սահմաններ դնես, դա ինքնըստինքյան չի նշանակի, որ այլևս չես ձախողվի քո կյանքի տվյալ ասպարեզում: Տվյալ մեղքը հաղթահարելու քո ցանկության ժամանակ դու, հնարավոր է, ինքդ քեզ խոստացել ես. «Ես այլևս դա չեմ անի», կամ՝ «Ես այսուհետև երբեք այդ մասին չեմ մտածի»: Իսկ ընդամենը մի քանի օր կամ շաբաթ հետո դու տեսնում ես, որ բռնվել ես նույն խնդրի թակարդի մեջ:

Մենք պետք է այդ սահմանները դնենք՝ միաժամանակ հասկանալով, որ Աստծո կարիքն ենք ունենալու, որպեսզի այս նոր կանոնները դարձնենք մեր կյանքի անբաժան մասը: Երբ դու ձախողվում ես ու ընկնում, պետք է ընդունես քո սխալը և վերադառնալով քո դրած սահմանների միջև գտնվող ուղու վրա՝ շարունակես առաջ գնալ:

գ. Որտեղի՞ց է Աստված ուզում, որ ես սկսեմ:

Եթե Աստված քեզ տալու լինեք երեք ամենագլխավոր սահմանները, որոնց վրա Նա կցանկանար, որ դու կենտրոնանայիր, ի՞նչ կդնեք Նա այդ ցուցակում:

Պատասխանը բոլորի համար նույնը չի լինի, բայց եթե աղոթես և Աստծո օգնությունը փնտրես, Նա քեզ ցույց կտա այն ուղին, որով Նա ուզում է, որ դու քայլես: Այսպիսով, որո՞նք են քո ամենամեծ մարտահրավերները: Ո՞ր խնդիրների դեմ ես դու ամենաշատը պայքարում: Իմացիր, թե ինչ է Աստված ասում տվյալ խնդրի վերաբերյալ, կամ բնավորության որ գիծը քեզ կօգնեք նոր ձևով արձագանքելու այդ խնդրահարույց իրավիճակներին:

Դիմիր Աստծուն օգնության համար: Նա խոստացել է տրամադրել այն ողջ օգնությունը, որի կարիքը դու ունես, հասկապես, երբ սկսար ես:
Տես Բ Կորնթացիս 12.9-10:

3. Ուրեմն, որտեղի՞ց սկսեմ:

Սահմաններն ազդում են մեր կյանքի բոլոր ասպարեզների վրա: Ուրեմն ես որտեղի՞ց պետք է սկսեմ: Ոչ ոք չի կարող տալ քո այս հարցի պատասխանը: Սա մի հարց է, որի համար կարիք կա աղոթելու: Ահա մի քանի հարցեր, որոնք կարող են քեզ օգնել՝ հասկանալու, թե որոնք են այն առանցքային կետերը, որտեղից դու պետք է սկսես:

Ինչպիսի՞ սահմաններ են պետք, որպեսզի ես կարողանամ մյուսների համար ապահով մարդ դառնալ:

Ո՞ր հարցում եմ ես անպատասխանատու:

Իմ մտային կյանքի ո՞ր ասպարեզները կարիք ունեն բարելավման: Ես քննադատող դ եմ մյուսների հանդեպ: Ո՞ր գայթակղություններն են ուժեղ իմ կյանքում:

Ինչպիսի՞ զգացմունքային արձագանքներ կարիք ունեմ յուրացնելու:

Ո՞ր ասպարեզներում եմ ես դժվարանում հնազանդվել Աստծուն:

Իմ ո՞ր վարքագիծը ես կարիք ունեմ փոխելու:

Որտե՞ղ եմ ես շահագործող:

Ինչպե՞ս եմ ես փորձում վերահսկել մարդկանց:

Իմ կյանքի ո՞ր ասպարեզներն են վերահսկողությունից դուրս գտնվում:

Եթե դու դեռևս չես կողմնորոշվում, թե որտեղից սկսես գործնական սահմաններ հաստատել, կարող ես օգնության համար դիմել որևէ վստահելի ընկերոջ կամ քո ընտանիքի անդամին. մի մարդու, ով քեզ անկեղծորեն կպատասխանի: Այդ թեմաները քննարկելիս դիմի՛ր նրանց օգնությանը:

Սակայն, միևնույն է, դու պետք է պատասխանատվություն ստանձնես այդ սահմանների վերաբերյալ որոշումներ ընդունելու համար: Դու կարող ես գրի առնել այն սահմանները, որոնք ուզում ես դնել հաջորդ մի քանի շաբաթների համար: Կարող է օգտակար լինել՝ դրանք գրել թե՛ դրական ձևակերպմամբ, թե՛ բացասական. «Ես սուտ չեմ խոսի», և՛ «Ես անկեղծ կլինեմ մարդկանց հետ շփվելիս՝ սիրով խոսելով ճշմարտությունը»:

Սահմաններն ընդամենը փորձանքներից և վատ վարքագծից խուսափելու համար չեն: Դրանք նաև պետք է կենտրոնացնել լավ վարքի զարգացման համար, որը քեզ կբնութագրի որպես Հիսուսի ճշմարիտ հետևորդ:

Դու կարող ես քո ընկերոջը կամ ընտանիքի անդամին ներգրավել որպես մեկին, ում դու հաշվետու ես: Ասա՛ նրան. «Մա իմ կյանքի մի ասպարեզ է, որտեղ ես աշխատում եմ ապրել այս սահմանների մեջ: Կարո՞ղ ես ինձ հետևել, որպեսզի երբ տեսնես, որ այս սահմաններից դուրս եմ գալիս, ինձ տեղյակ պահես»: Կյանքում ինչ-որ մեկի առաջ հաշվետու լինելը կարող է հիանալի դրդապատճառ լինել՝ ճիշտ ուղով ընթանալու համար:

Կյանքում առողջ սահմաններ դնելը քեզ կդարձնի քո ընկերների համար ապահով և գնահատված մարդ, մի մարդ, ով ունի պատասխանատվության զգացում և ինքնակառավարում, ով ապրում է ազատության մեջ և հարկ եղած դեպքում անկեղծ սեր է արտահայտում:

Գ. Ինչպե՞ս ընտրել ապահով ընկերներ:

Դու պետք է խիստ հետաքրքրված լինես ապահով մարդկանց՝ որպես քո ընկերներ ընտրելու հարցում: Անցյալի մասին մտածելիս կարող ես շատ ցավոտ հիշողություններ ունենալ՝ կապված այն ժամանակ ունեցած ընկերների պատճառով քո կրած վնասների հետ: Ինչպե՞ս կարող է քո ապագան տարբեր լինել քո անցյալից: Ապահով ընկերներ ընտրելը քո ապագա երջանկության կարևոր բաղադրիչներից մեկը կլինի:

Dr. Henry Cloud-ի և Dr. John Townsend-ի «Safe People» գիրքը այս թեմայի համար մեծ աղբյուր է: Գրքի ենթավերնագրերից մեկն այսպիսին է՝ «Ինչպե՞ս գտնել փոխհարաբերություններ, որոնք լավ են քեզ համար, և ինչպե՞ս խուսափել այն փոխհարաբերություններից, որոնք լավ չեն»: Հասանելի է նաև այս գրքի

աշխատանքային տեսքը, որը կարելի է օգտագործել անձնական սերտոդության ժամանակ, կամ փոքր խմբում՝ որպես քննարկման ուղեցույց:

Այսպիսով, որո՞նք են ապահով մարդկանց ընտրելու բանալիները:

1. Ինչպե՞ս կողմնորոշվել, որ տվյալ մարդն ապահով անձնավորություն չէ:

Ինչպե՞ս կարող ես իմանալ, որ տվյալ անձնավորությունն ապահով մարդ չէ: Գրեթե միշտ մենք նոր ընկերներ ընտրում ենք՝ ելնելով այն բանից, որ նրանք ունեն լավ տեսք և գրավիչ անհատականություն: Սակայն ընտրության հարցը հասկանալու համար իրական չափանիշը (թե արդյո՞ք տվյալ անձնավորությունն ապահով մարդ է) ոչ մի կապ չունի արտաքին գրավչության կամ անհատականության հետ: Այն ամբողջությամբ կապված է ներքին որակների հետ:

Մեզնից շատերը երբևէ չեն սովորել, թե ինչպես կարելի է գնահատել մարդու բնավորությունը: Կողմնորոշվելու համար, սովորաբար, մենք նայում ենք «լավ արտաքինին» և մտնում ենք նոր փոխհարաբերությունների մեջ՝ աչքներս փակ, երբ հարցը վերաբերում է բնավորության գծերին:

Ուրեմն ինչպե՞ս կարող ես տարբերել ոչ ապահով մարդուն:

Ահա մի քանի հատկանիշներ, որոնք բնութագրում են ոչ ապահով մարդուն:

- Նրանք գրավիչ են, բայց անպատասխանատու:
- Նրանք հպարտ են: Նրանք բարձր կարծիք ունեն իրենց մասին և հաճախ ասում են, որ իրենք ավելի լավն են, քան մյուսները:
- Նրանք բարկության հետ կապված խնդիր ունեն: Եթե դու նրանց սպասելիքները չբավարարես, կարող են հեշտությամբ բարկանալ քեզ վրա:
- Երբ ընկերների մեջ կոնֆլիկտ է առաջանում, ոչ ապահով մարդն անմիջապես մեղադրում է քեզ, և դու ես պարտավոր լինում հարթելու այդ խնդիրը:
- Նրանք չեն պահում իրենց խոստումները, բայց ակնկալում են, որ դու կպահես քո տված խոստումները:
- Նրանք անիրական գործողություններ են ակնկալում քեզնից և մյուսներից: Նրանք ուրիշներից կատարելություն են պահանջում:
- Նրանք քեզ (և ընդհանրապես՝ մարդկանց) լսում են իրենց պայմաններով. պահանջում են, որ դո՛ւ լսես նրանց, մինչդեռ իրենք հաճախ ժամանակ չեն տրամադրում քեզ իրոք լսելու համար, հատկապես եթե դու ինչ-որ խնդրի ես հանդիպել:

- Նրանք անվստահելի են, սակայն քեզնից պահանջում են, որ դու հավատարիմ լինես առանց հարցեր տալու:
- Նրանք ավելի շատ հետաքրքրված են իրենցով, քան քեզնով:
- Ոչ ապահով մարդը քեզ հետ չի վարվում՝ ինչպես իրեն հավասարի: Նրանք քեզ մոտ տպավորություն են ստեղծում, որ դու իրենց չափ չկաս: Կամ էլ կարող են իրենց երեխայի պես պահել՝ ակնկալելով, որ դու իրենցից հետո կմաքրես, կամ կանես տվյալ գործողությունը:
- Նրանք կարող են շահագործել քեզ, իսկ հետո հմայիչ ժպիտով գալ ու խնդրել, որ ներես ու մոռանաս:

Ոչ ապահով մարդուն բնութագրող ավելի շատ հատկանիշների օրինակներ կարելի է բերել: Պարտադիր չէ, որ ոչ ապահով մարդն իր բնավորության մեջ ունենա վերը նշված բոլոր հատկությունները, բայց եթե դրանք մասամբ տեսնում ես ինչ-որ մեկի մեջ, դա քեզ համար պետք է նախազգուշացնող ազդանշան լինի, որ տվյալ անձնավորությունն ապահով մարդ չէ:

Եթե ուզում ես մյուսներից տարբերել ոչ ապահով մարդկանց, պետք է ուշադիր լինես քո գործողությունների հարցում: Այսինքն՝ եթե դու կուրորեն ցատկում ես նոր փոխհարաբերության մեջ՝ համարելով, որ նա հիանալի ընկեր է միայն այն պատճառով, որ քեզ դուր է գալիս, ապա դու խոցելի ես դառնում վնասվելու հարցում:

Դու պետք է քեզ համար որոշում կայացնես, որ որպես ընկերներ կրնտրես միայն ապահով մարդկանց և հեռու կմնաս ոչ ապահով մարդկանցից: Երբ դու ինչ-որ մեկի հետ ընկերություն անելու խիստ ցանկություն ես ունենում՝ հապճեպ, չմտածված քայլեր կատարելով, դա կարող է սխալ ընտրության պատճառ դառնալ: Եվ դա հենց կործանման բանաձևն է:

2. Ինչո՞ւ եմ ես գրավում ոչ ապահով մարդկանց:

Մի երիտասարդ կին մի անգամ հարցրեց. «Իմ ճակատին դաջվա՞ծք կա՝ «Դուք կարող եք ինձ շահագործել»: Եվ այն էլ միայն շահագործող մարդիկ են կարողանում դա տեսնել»:

Ինչո՞ւ են որոշ մարդիկ անընդհատ՝ մեկը մյուսի հետևից հայտնվում վատ փոխհարաբերությունների մեջ:

Այս հարցը երկու կողմ ունի: Մի կողմն այն է, թե ում ես դու թույլ տալիս մտնել քո կյանք: Մարդիկ, որոնք ապահով անձնավորություններ չեն, կարող են ցանկանալ հենց քե՞զ ընտրել որպես իրենց ընկեր: Հարցի մյուս կողմն այն է, որ դու կարող ես գրավիչ լինել ինչ-որ մեկի համար, ով ապահով անձնավորություն չէ:

Ինչո՞վ էս գրավում մեկին, ով ապահով անձնավորություն չէ: Գուցե նրանով, որ դու ակամա ազդանշաններ ես ուղարկում՝ «Ես ընկեր եմ փնտրում»: Կամ գուցե դու քեզ զգում ես միայնակ և սիրո կարոտ: Այս երկու հանգամանքները կարող են քեզ թիրախ դարձնել ոչ ապահով մարդկանց համար: Ոչ ապահով մարդիկ փնտրում են անձնավորություններ, ովքեր ուզում են, որ իրենց կարիքն զգան: Նրանք փնտրում են այնպիսի անձնավորություններ, որոնց նրանք կարող են օգտագործել իրե՛նց կարիքները հոգալու համար:

Երբ մարդը սիրո փափագ ունի, շատ հեշտությամբ կարող է ընտրել ցանկացած մեկին, ով կպատահի, ով, կթվա թե, հենց իր երազած անձնավորությունն է: Եթե դու երբևէ ապահով ընկերներ չես ունեցել, ապա ապահով ընկերների մասին այս ողջ խոսակցությունը քեզ կարող է ավելի շուտ ֆանտաստիկ թվալ:

Դու չպետք է հարկադրված լինես ոչ ապահով մարդկանց ասել՝ «այո»: Աստված ծրագիր ունի քո կյանքի համար, որը լցված է հույսով, և Նա ուզում է, որ դու անձնական փոխհարաբերություններ ունենաս այնպիսի մարդկանց հետ, ովքեր դրական ազդեցություն կունենան քո կյանքի վրա: Երբ դու հավատաս, որ Աստված հույսով լի ապագա ունի քեզ համար պատրաստած, որում կան ապահով փոխհարաբերություններ, դու կկարողանաս յուրաքանչյուր օրն ապրել վստահությամբ:

Եթե դու սովորում ես ճիշտ գնահատել մարդկանց և կարողանում ես արտաքին տեսքից անցնել ու ներս նայել՝ տեսնելու համար նրանց ներքին էությունը, դրանով քեզ համար երաշխիք ես ստեղծում, որ ի վիճակի կլինես ապահով մարդկանց ընտրել՝ որպես ընկերներ: Սովորի՛ր «ո՛չ» ասել ոչ ապահով մարդկանց՝ անկախ այն բանից, թե որքան գրավիչ աչքեր ունեն նրանք:

Մի քանի տարի առաջ հեռուստացույցով մի գովազդ էր ցուցադրվում կոնկրետ շամպունի մասին: Մի գեղեցիկ երիտասարդ տղա մոտենում է մի գեղեցիկ երիտասարդ աղջկա, բայց նրա ուսին մազի թեփ տեսնելով՝ շրջվում է ու հեռանում: Ուղերձը սա էր. երիտասա՛րդ աղջիկ, դու խնդիր ունես, որովհետև դու ճիշտ շամպուն չես օգտագործում:

Բայց ես ուզում եմ աղաղակել. «Ի՞նչ: Մի բռայե՛: Եթե այդ երիտասարդ տղան չի ուզում լինել քո ընկերը, որովհետև քո ուսին մազի թեփ է տեսել, ուրեմն, սիրելի՛ս, համարի՛ր, որ նրա հեռանալը քո օրհնությունն է: Նա ապահով անձնավորություն չէ: Եթե նա պատրաստ է քեզ լքել այն պատճառով, որ քո ուսին թեփ է տեսել, պատկերացրո՛ւ՝ ի՛նչ կլինի, եթե դու իրոք խնդիր ունենաս»:

Դու չպետք է թույլ տաս, որ քո զգացմունքները որոշեն՝ տվյալ մարդն ապահով անձնավորությունն է, թե՛ ոչ: Դու պետք է քո որոշումը հիմնես ճշմարտության վրա, պետք է սովորես տվյալ անձնավորությանը տեսնել այնպես, ինչպես Աստված է տեսնում նրանց: Ոչ ապահով մարդուն «ո՛չ» ասելը լավագույնն է, որ դու կարող ես անել՝ անկախ այդ մարդու հմայքից:

3. Ինչպե՞ս կարող եմ ապահով ընկեր ընտրել:

«Ապահով մարդիկ» ('Safe People') գրքում հեղինակները նկարագրում են, որ ապահով ընկերությունը բավարարում է երեք հիմնական կարիքներ:

- Ավելի է մոտեցնում Աստծուն:
- Ավելի է մոտեցնում մյուսներին:
- Օգնում է մեզ լինել այն իրական անձնավորությունը, որին Աստված ստեղծել է, որ լինենք:

Այս երեք կետերը կարող են օգտագործվել՝ գնահատելու համար քո բոլոր փոխհարաբերություններն անկախ այն բանից, որ վերաբերում է դա ընտանիքի անդամների՞ն, լավագույն ընկերների՞ն, թե՞ ապագա կողակցին:

Ապահով ընկերը քեզ ավելի է մոտեցնում Աստծուն, որովհետև նա էլ է սիրում Աստծուն: Ինչքան շատ է քո ընկերը Հիսուսին հետևելուն նվիրված, այնքան շատ կցանկանա, որ դու էլ մոտենաս Հիսուսին: Ապահով ընկերները նրանք են, ովքեր որոշել են հետևել Հիսուսին իրենց կյանքի բոլոր ասպարեզներում: Նրանք նաև որոշել են իրենց կյանքում բնավորության այնպիսի գծեր զարգացնել, որոնք կփառավորեն Աստծուն:

Ապահով ընկերները քեզ մոտեցնում են մյուս մարդկանց: Իսկ ոչ ապահով ընկերոջ առաջին նշաններից մեկն այն է, որ նա քեզ հետ առանձնակի՝ ուրիշներից մեկուսացած փոխհարաբերություններ է ուզում ունենալ: Նա չի ուզում, որ դու այլ մեկի հետ մտերմություն անես, նա նայում է դրան՝ որպես անհավատարմության:

Ապահով ընկերները, ընդհակառակը, գնահատում են բազմաթիվ մարդկանց հետ փոխհարաբերություններ ունենալը: Նրանք քեզ քաջալերում են, որպեսզի մյուսների հետ նույնպես շփվես՝ առանց խանդելու նրանց հետ ունեցած քո ընկերությանը: Ապահով մարդիկ մեկից ավելի ընկերներ ունեն և, սովորաբար, ընկերություն են անում այլ ապահով մարդկանց հետ:

Ապահով ընկերության երրորդ հատկանիշն այն է, որ նրանք քեզ օգնում են իրոք լինել այնպիսի անձնավորություն, ինչպիսին Աստված է քեզ ստեղծել, որ լինես: Նրանք չեն փորձում սոսկ մի բան պոկել քեզնից: Նրանք ուզում են, որ ձեր փոխհարաբերությունների արդյունքում դու ավելի լավ հասկանաս, թե ինչ է նշանակում լինել Աստծո ուզածի պես իրական անձնավորություն: Նրանք անկեղծ են, և քեզ համար էլ ապահով է նրանց հետ անկեղծ լինելը: Նրանք քեզ կքաջալերեն, որ ամբողջությամբ լինես Աստծո ուզածի պես:

Եփեսացիներին 2:10.

«Որովհետև մենք Նրա ձեռքի գործն ենք, Քրիստոս Հիսուսով բարի գործերի համար ստեղծված, որոնց Աստված նախապես պատրաստեց, որ նրանց մեջ քայլենք»:

Ապահով ընկերները կհաստատեն քո պարզներն ու տաղանդները և կուրախանան, երբ դու սովորես դրանք Աստծուն պատիվ բերող ձևով օգտագործել: Ապահով ընկերների համար մեծ ուրախություն կլինի, երբ դու հետևես այն ուղուն, որն Աստված է նախանշել քեզ համար: Նույնիսկ եթե այդ ուղուն հետևելը նշանակի ուրիշ քաղաք տեղափոխվել, քո ընկերները կողջունեն, թե ինչ է Աստված անում քո կյանքում:

Եթե դու փափագես ապահով ընկերներ ունենալ, կարող ես վստահ լինել, որ Աստված կօգնի քեզ: Երբ հարցը վերաբերում է մոտիկ և մտերիմ ընկերներ ունենալուն, ապահով մարդկանցից բացի ուրիշ ընտրություն մի՛ արա:

Ժամանակ հատկացրո՛ւ՝ ապահով ընկերներ ընտրելու մասնագետ դառնալու համար: Dr. Henry Cloud-ի և Dr. John Townsend-ի «Safe People» գիրքը արժեքավոր աղբյուր է՝ այս գործընթացում քեզ օգնելու հարցում: Մի՛ համաձայնիր ավելի քչի հետ, քան Աստծո լավագույնն է քեզ համար:

4. Ի՞նչ պետք է ես անեմ, եթե ոչ ապահով անձնավորության հետ եմ շփվում:

«Այս փոխհարաբերության մեջ ես ինձ թակարդի մեջ եմ զգում», - ասում է Բագրատը: Ապրելով քոլեջի հանրակացարանում որպես 18 տարեկան նոր ուսանող՝ նա ծանոթացավ մի ուսանողուհու՝ Գայանեի հետ: Վերջինս նույնպես նոր ուսանող էր: Շուտով Գայանեն ծանոթությունից անցավ սովորական ընկերության և հետո՝ մտերիմ ընկերության: Մի քանի շաբաթ անց նա Բագրատին ասաց, որ նրա հետ ամուսնանալու ցանկություն ունի:

Սակայն Բագրատն անհանգստություն ուներ այս փոխհարաբերության հետ կապված: Մի օր Գայանեն շատ տխուր էր և իրեն լավ չէր զգում: Նա Բագրատին ասաց. «Ես հիվանդ եմ, որովհետև դու ինձ բավարար չես սիրում»:

Բագրատն ուզում էր վերջ տալ այս փոխհարաբերությանը, սակայն չէր ցանկանում վիրավորել Գայանեի զգացմունքները: Նա վախենում էր, որ եթե դադարեցնի այդ կապը, Գայանեն խորը կվիրավորվի:

Ի՞նչ կասեիր դու Բագրատին, եթե լինեիր նրա մոտիկ ընկերը: Ի՞նչ խորհուրդ կտայիր նրան՝ կապված Գայանեի հետ նրա փոխհարաբերության հետ:

Բագրատը դիմեց մարդկանց, որոնք կարող էին նրան օգնել՝ տեսնելու ճիշտ տարբերակները և խելացի որոշում կայացնելու: Նրանք Բագրատին ասացին, որ պատասխանատու չի Գայանեի զգացմունքների համար, քանի որ ինքը չէր նրա հիվանդության պատճառը: Նմանապես՝ պատասխանատու չի լինի աղջկա զգացմունքների համար, եթե որոշի դադարեցնել իրենց միջև եղած փոխհարաբերությունը:

Նրանք օգնեցին Բագրատին տեսնելու, որ թեև Գայանեն Աստծուն սիրում է, սակայն ապահով անձնավորություն չի: Նա հաստատ լավ թեկնածու չէր Բագրատի հետ ամուսնանալու համար: Եթե Բագրատը շարունակեր մնալ Գայանեի հետ նման փոխհարաբերության մեջ, անկեղծ չէր լինի, որովհետև նրա հետ շփվելու հիմնական պատճառն ընդամենը նրա զգացմունքները չվիրավորելն էր:

Բագրատը վերջնական արդյունքում որոշեց խզել Գայանեի հետ կապը: Շատ չանցած՝ Գայանեն մեկ ուրիշի հետ փոխհարաբերություն սկսեց և մի քանի ամիս անց ամուսնացավ:

ա. Անկեղծ եղիր ինքդ քեզ հետ:

Ամենամեծ մարտահրավերներից մեկը, որին շատ մարդիկ կարող են հանդիպել, իրենց փոխհարաբերությունների մեջ անկեղծ լինելն է: Մենք թույլ ենք տալիս, որ մեր զգացմունքները որոշումներ կայացնեն մեր ընկերների վերաբերյալ: Եթե մեզ դուր է գալիս նրանց հետ շփվելը, ուրեմն նրանք պետք է որ ապահով մարդիկ լինեն: Շատ հեշտ է ապրել՝ իրականությունը մերժելով և չտեսնելով այն իրավիճակները, որոնք բացահայտում են քո ընկերոջ բնավորությունը:

Դու պետք է անկեղծորեն նայես, թե ինչ հետևանքներ կլինեն քո կյանքում, եթե շարունակես տվյալ մարդու հետ ընկերություն անել հետագա 5 տարիների կամ քո մնացած ողջ կյանքի ընթացքում:

- Դու կուզենա՞ս ընկերություն անել մեկի հետ, ով ամբողջությամբ իր կյանքը չի նվիրել Հիսուսին հետևելուն:
- Դու կուզենա՞ս ընկերություն անել մեկի հետ, ով խանդոտ է, հաճախ վատ տրամադրությամբ կամ անկանխատեսելի:
- Դու կուզենա՞ս ընկերություն անել մեկի հետ, ով հասուն չէ, որ ավելի հետաքրքրված է իր անձնական կարիքներով, քան՝ քո:
- Դու կուզենա՞ս ընկերություն անել մեկի հետ, ով ձեր փոխհարաբերություններում հանդիպող խնդիրների համար միշտ քեզ է մեղադրում, ով պատասխանատվություն չի վերցնում իր խնդիրների համար, այլ արդարացումներ է փնտրում:

Ոչ ոք կատարյալ չէ: Մենք բոլորս էլ ունենք ուժեղ և թույլ կողմեր: Բայց դու պետք է դառնաս այնպիսի անձնավորություն, ով կարողանում է կողմնորոշվել, թե արդյո՞ք տվյալ մարդն ապահով անձնավորություն է: Իսկ եթե հայտնվել ես ոչ ապահով մարդու հետ փոխհարաբերության մեջ, ապա անհրաժեշտ է, որ դիմես Աստծո օգնությանը:

բ. Խզել փոխհարաբերությունը:

Եթե հայտնվել էս ոչ ապահով փոխհարաբերության մեջ, ապա ամենագործնական ձևերից մեկը, որով դու կարող ես արձագանքել, տվյալ մարդու հետ շփումը դադարեցնելն է: Անկեղծությունը փոխհարաբերության լավագույն հիմքն է: Հիսուսն ասաց. «Թող ձեր «այո-ն» «այո» լինի, իսկ «ոչ-ը» «ոչ»» (Մատթեոս 5.37): Մի՛ ասա՝ «Այո՛, ես ուզում եմ լինել քո ընկերը», երբ ներքուստ ասում ես՝ «Ո՛չ, ես ուզում եմ դադարեցնել այս փոխհարաբերությունը»: Պարզապես ասա՛ այդ անձնավորությանը. «Ես ուզում եմ դադարեցնել մեր փոխհարաբերությունը»:

Երբ դու որոշում ես ինչ-որ մեկի հետ կապը խզել, հարկադրված մի՛ զգա մանրամասն հաշվետվություն տալու և նշելու բոլոր պատճառները, թե ինչո՞ւ ես ուզում խզել այդ փոխհարաբերությունը: Շատ կան մարդիկ, ովքեր շատ լավ խոսողներ են և հակառակ հանգամանքներ կներկայացնեն քո բերած բոլոր պատճառների դիմաց: Թույլ մի՛ տուր, որ դիմացի՛նն ընդունի ձեր փոխհարաբերությունը դադարեցնելու մասին որոշումը: Դու պետք է համոզված լինես, որ ուզում ես այդ կապը խզել և կանգնել այդ որոշման վրա՝ անկախ այն բանից, թե ինչ կասի դիմացինը: Ուրեմն, նախքան այդ խոսակցությունը սկսելը դու պետք է որոշում կայացնես, որ միտքդ չես փոխելու, եթե տվյալ անձնավորությունը հակառակը պնդի:

Լավագույն տարբերակը կլինի՝ այդ խոսակցությունն ունենալ ազատ միջավայրում, որտեղ դիմացինը չի կարողանա վերահսկողությունը վերցնել իր ձեռքը: Նախքան այս հանդիպումը դու պետք է ծրագրես, թե ինչ ես անելու այդ հանդիպման ավարտից հետո: Պետք է ինքնուրույն վերադառնաս տուն, որպեսզի ստիպված չլինես քեզ տուն կամ այլ՝ քո ուզած տեղը հասցնելու համար դիմել նրա օգնությանը:

գ. Ոչ ապահով փոխհարաբերությունը խզելուց հետո:

Մի՛ զարմացիր, եթե տվյալ անձնավորությունը նեղսրտի կամ բարկանա քեզ վրա: Այն Աստվածը, ում դու ծառայում ես, կարող է օգնել քեզ՝ հաղթահարել այդ բաժանման ցավը: Աստված չի ուզում, որ դու զբաղվես այդ մարդուն մխիթարելով: Աստված Ի՛նքը նրան օգնելու բազմաթիվ ձևեր ունի:

Մի՛ զարմացիր, եթե դրանից հետո կասկածներ գան, թե արդյո՞ք ճիշտ ես արել այդպես վարվելով: Դու պետք է հաստատուն մնաս քո որոշման մեջ՝ անկախ այն բանից, թե ինչ են ասում քո զգացմունքները: Հիշի՛ր, դու չես կարող թույլ տալ, որ քո զգացմունքները կայացնեն քո կյանքի այդքան կարևոր որոշումը:

Դու պետք է նաև որոշում կայացնես՝ այլևս չվերադառնալ այդ փոխհարաբերությանը: Ոչ ապահով անձնավորությունն այն մարդը չէ, որ մի օր մի փոքրիկ սխալ է արել, և այդ պատճառով դու խզել ես ձեր փոխհարաբերությունը: Ոչ ապահով մարդը բնավորության վտանգավոր գծեր ունեցողն է, որոնք կործանարար են քեզ համար: Բնավորության հետ կապված խնդիրները մեկ օրում կամ մեկ շաբաթում հնարավոր չէ լուծել:

դ. Իսկ եթե այդ ոչ ապահով անձնավորությունը բարեկամ է:

Հնարավոր է, որ ոչ ապահով մարդիկ լինեն նաև քո բարեկամների կամ ընտանիքի անդամների մեջ: Արդյո՞ք սա նշանակում է, որ դու այլևս չպետք է խոսես նրանց հետ, կամ մոտենաս նրանց: Այս հարցին միանշանակ պատասխան չկա: Պատասխանի մի մասը կախված կլինի այն հարցից, թե որքանո՞վ է վտանգավոր տվյալ անձնավորությունը: Նա կովարա՞ր է, կամ անցյալում բռնություն գործադրե՞լ է քո կամ մյուսների հանդեպ:

Դո՞ւ պետք է որոշես, թե ինչ անես, որ ապահովես քո անվտանգությունը: Եթե դու դեռևս վտանգի մեջ ես, ապա պետք է վճռական քայլեր անես, որպեսզի դուրս գաս այդ իրավիճակից:

Եթե տվյալ ոչ ապահով անձնավորությունը քո հարևանն է կամ աշխատակիցը, ուրեմն պետք է կողմնորոշվես, թե ինչպես ես ինքդ քեզ պաշտպանելու: Մի՛ հայտնվիր այնպիսի իրավիճակում, որտեղ կարող ես գտնվել նրանց վերահսկողության տակ: Դիմի՛ր ուրիշների օգնությանը՝ կողմնորոշվելու համար, թե որը կլինե՞ր տվյալ իրավիճակից դուրս գալու լավագույն ձևը:

ե. Ինչպե՞ս վարվել նրանց հետ, ովքեր իմ ընկերներն էին, նախքան ես կդառնայի ճշմարիտ քրիստոնյա:

Եթե դու վերջերս ես հավատացյալ դարձել, հնարավոր է՝ դեռևս ունենաս շատ ընկերներ, ովքեր հավատացյալ չեն: Ինչպե՞ս վարվել նրանց հետ: Նրանք կարող են իրենցից ներկայացնել այս գրքի 2-րդ գլխում նկարագրված չորս տեսակի ընկերություններ՝ ծանոթներ, սովորական ընկերներ, մոտիկ ընկերներ և մտերիմ ընկերներ:

Ինչքան շատ նրանց հետ շփվես, այնքան ավելի մեծ կլինի նրանց ազդեցության հնարավորությունը քեզ վրա: Ամենակարևոր որոշումներից մեկը, որը դու կարող ես ընդունել այս բոլոր ընկերների հետ կապված, աղոթքով նրանց Հիսուսի ներկայության մեջ բերելն է. «Հիսո՛ւս, ինչպե՞ս ես Դու ուզում, որ ես վարվեմ նրանցից յուրաքանչյուրի դեպքում»: Եթե դու թույլ տաս, որ Հիսուսը որոշում կայացնի քո հին ընկերների հետ կապված, ապա կարող ես վստահ լինել, որ Նա լավագույնը կանի քեզ համար:

Բացի Աստծուն թույլ տալուց, դու նաև պետք է հստակ որոշում կայացնես, որ նրանք, ովքեր մերժում են Հիսուսին, չեն կարող լինել քո ընկերները: Եթե դու շփվում ես քո հին ընկերների հետ, շատ հստակ ասա՝ նրանց, որ կյանքդ տվել էս Հիսուսին և այլևս մասնակից չես լինելու նրանց մեղսալից արարքների մեջ:

Շատ ու շատ նորադարձ քրիստոնյաներ լուրջ չեն ընդունել հին ընկերների հետ շփվելու հնարավոր վտանգը և շուտով հայտնվել են մի իրավիճակում, որ զիջել են մեղքի հարցում և նույնիսկ մեջքով են շրջվել Աստծուն: Մի՛ խաբիր ինքդ քեզ, որ դու ավելի լավ գիտես, թե որն է քեզ համար լավագույնը: Հանձնի՛ր այդ փոխհարաբերությունները Հիսուսին և թո՛ւյլ տուր Նրան՝ առաջնորդել քեզ:

Հովսեփը հավատացյալ դարձավ Թին Չելենջում և մեջքով շրջվեց դեպի իր թմրամոլ անցյալը: Ադոթելիս նա զգաց, որ Աստված իրեն ասում է՝ չվերադառնալ իր հին շրջապատի մոտ, այլ նոր փոխհարաբերություններ զարգացնել հավատացյալների հետ: Գրեթե 10 տարի անց միայն զգաց, որ Աստված իրեն թույլ է տալիս վերադառնալ և շփվել իր հին շրջապատի հետ:

Դու կարող ես մտածել, որ սա ծայրահեղություն է: Սակայն փաստն այն է, որ Հովսեփը սա հասկացավ, որովհետև ադոթել էր և զգացել՝ Աստված էր իրեն ասում, որ այդպես վարվի: Բարի լուրն այն է, որ Հովսեփը շարունակում էր ծառայել Աստծուն նույնիսկ հավատացյալ դառնալուց 20 տարի հետո էլ, երբ պատմում էր մեզ իր պատմությունը: Երբ հարցը վերաբերում է քո հին ընկերների հետ անձնական փոխհարաբերություններին, արա՛ այն, ինչ Աստված է ուզում, և հավատա՛, որ դա լավագույնն է քեզ համար: Վստահի՛ր Աստծուն և պատրաստակա՛մ եղիր անել այնպես, ինչպես Նա է քեզ ասում:

Եզրակացություն:

Ամենաապահով ընկերությունը, որ դու կարող ես ունենալ, Հիսուսի հետ է: Նույնիսկ եթե դու ընկերություն ես արել ոչ ապահով մարդու հետ, և դրանից սիրտդ կոտրված է, մի՛ վախեցիր հիմնվել Աստծո այն խոստման վրա, որ Նա քո կյանք դեռ կբերի մարդկանց՝ որպես ապահով անձնավորությունների: Ուշադի՛ր եղիր մոտիկ և մտերիմ ընկերներ ընտրելիս: Համոզվի՛ր, որ նրանք կարող են ապահով ընկերներ լինել: Շարունակի՛ր ամեն բան անել, որպեսզի աճես և դառնաս այնպիսի անձնավորություն, ինչպիսին Աստված է ուզում, որ ապահով ընկեր լինես արդեն նաև մյուսների համար:

Գլուխ 4.

Սեռական փոխհարաբերություններ և քրիստոնեական կյանք

Ի՞նչ դեր ունի սեռական կյանքը հոգևոր կյանքում: Դասընթացի մնացած հատվածը կփորձի պատասխանել այս հարցին: Ահա մի քանի հարցեր, որոնց շուրջ դու կարող ես մտածել հետագա մի քանի օրվա ընթացքում:

- Ի՞նչ ծրագիր ունի Աստված չամուսնացած մարդկանց համար:
- Ի՞նչ անել, եթե սիրահարված ես մեկին, ով հավատացյալ չէ:
- Ի՞նչ անել, եթե դու, չամուսնացած լինելով, ակտիվ սեռական կյանքով ես ապրել:
- Ինչպե՞ս է նախքան ամուսնությունն ունեցած քո սեռական կյանքն ազդում քեզ վրա ամուսնանալուց հետո:
- Ո՞րն է հակառակ սեռի հետ ճիշտ շփվելու գրավականը:
- Ի՞նչ կարելի է ասել հակառակ սեռի ոչ հավատացյալ ներկայացուցչի հետ հանդիպումների մասին:
- Ինչպե՞ս գտնել կյանքի ընկեր:
- Ի՞նչն է հոգևոր ամուսնությունը դարձնում առանձնահատուկ:
- Ինչպե՞ս կարող ես վերականգնել քո ամուսնությունը:
- Ի՞նչ կարելի է ասել քաղաքացիական ամուսնության մասին:

Հնարավոր է, որ դու ավելի շատ հարցեր ունես, քան վերը նշվածները: Մենք հույս ունենք, որ այս գլխի ուսումնասիրությունը գեթ մի փոքր քեզ կօգնի հասկանալ Աստծո ծրագիրը քեզ համար՝ որպես հնարավոր լավագույն կյանք, որն իր մեջ ներառում է փոխհարաբերություն հակառակ սեռի հետ: Բայց ի՞նչ տեսակ փոխհարաբերություն:

Ո՞վ է որոշելու, թե ինչ համոզմունքներով դու պետք է ապրես քո կյանքի այս ասպարեզում: Քո ընտանի՞քը: Քո ընկերներ՞ը: Քո մշակո՞ւյթը: Քո դպրոցի ուսուցիչներ՞ը: Հեռուստատեսային կամ կինոաստղե՞րը: Աստվա՞ծ:

Եթե դու որոշում ես կայացրել և խնդրել ես Հիսուսին՝ լինել քո կյանքի առաջնորդը, ապա կարող ես վստահ լինել, որ Նա պատրաստ է քեզ օգնել ցանկացած հարցում, որ դու կունենաս քո կյանքի այս ասպարեզում:

Ա. Մեռական կյանքը և չամուսնացած մարդը:

Եկեք սկսենք սեռական կյանքի և չամուսնացած մարդու հարցից: Մենք բոլորս էլ կյանքը սկսում ենք որպես չամուսնացած մարդ: Մեզնից շատերն ապրել են կամ կապրեն իրենց կյանքի 18 տարին՝ որպես չամուսնացած մարդ, իսկ շատերն էլ՝ դրանից ավելի երկար: Իսկ ոմանք ամուսնանում են ավելի երիտասարդ տարիքում:

Այն, թե ինչպես ես դու՝ որպես չամուսնացած մարդ, կառավարում քո մտքերը սեքսի և հակառակ սեռի հետ քո փոխհարաբերությունների վերաբերյալ, մեծ ազդեցություն կունենա քո ողջ կյանքի ընթացքում:

Աստված շատ բան ունի ասելու քո կյանքի այս ասպարեզի վերաբերյալ: Անկախ այն բանից, թե ինչ ես դու մտածում, Աստված քեզնից ավելին գիտի սեքսի մասին և այն մասին, թե ինչպես իրոք վայելել այն. Նա է ստեղծել դա: Եվ երբ Նա ստեղծեց դա, գիտեր, թե ինչ էր անում:

Սակայն Աստծո այս ամենաթանկ պարգևը նաև մեծ գործիք է, որ սատանան կօգտագործի՝ քեզնից թալանելու համար այն հատուկ օրհնությունը, որն Աստված ուզում է, որ սեքսը բերի քո կյանք: Մեքսը մեղսալից չէ, եթե այն օգտագործվում է Աստծո սահմանների մեջ: Սատանան ամեն ինչ կանի, որպեսզի դու անտեսես, թե ինչ է Աստված ասում սեքսի մասին: Սատանան ուզում է քեզ միանգամայն ուրիշ ուղիով տանել, քան Աստված է ծրագրել քեզ համար:

Այսպիսով, ո՞վ է մինչև հիմա ազդել սեքսի վերաբերյալ քո հավատալիքների վրա: Աստվա՞ծ: Քո ընտանի՞քը: Քո ընկերներ՞ը: Քո մշակո՞ւյթը:

1. Ի՞նչ է ասում սեքսի մասին քո մշակույթը:

Այսօր աշխարհի երկրների մեծ մասում սեքսը շատ մեծ տեղ է կազմում: Ֆիլմերը սեքսը ներկայացնում են բացահայտ կերպով: Թեև ֆիլմերը տեսակավորված են, սակայն երեխաների մեծ մասի համար հասանելի է ցանկացած ֆիլմ: Շատ երիտասարդներ այսօր սեքսի մասին սովորում են իրենց դիտած ֆիլմերից:

Սակայն ոչ միայն ֆիլմերն են ձևավորում սեքսի վերաբերյալ մեր մշակութային տեսակետը: Մեր տարիքի ընկերներն ու այլ մարդիկ նույնպես ուժեղ ազդեցություն են թողնում սեքսի վերաբերյալ մեր պատկերացումների վրա:

Շատ պատանիներ պարծենում են՝ պատմելով իրենց կուսությունը կորցնելու մասին, և հաճախ դա անում են առանց որևէ զղջման: «Բոլորն այդպես են անում, ուրեմն ես էլ կարող եմ անել այն, ինչ մյուսներն են անում», - սա է այսօրվա պատանիների տրամաբանական եզրակացության միտքն ու հավատալիքը:

- Որո՞նք են սեքսի մասին ամենամեծ ուղերձները, որոնք քեզ են փոխանցվում քո մշակույթի միջոցով:
- Ի՞նչ ազդեցություն ունի քո մշակույթը քո հավատալիքների վրա՝ սեքսի և չամուսնացած մարդու մասին:
- Ինչքանո՞վ է տարբերվում սեքսի վերաբերյալ քո մշակույթի տեսակետն Աստծո տեսակետից:
- Դու երբևէ ժամանակ հատկացրե՞լ ես մոտիկից ուսումնասիրելու, թե ինչ է Աստված ասում սեքսի հարցում քո մշակույթի մասին:

Այսօր շատ երկրներում մշակութային տեսակետն այնքան իշխող է, որ ցանկացած այլ տեսակետ պարզապես խեղդվում է: Եթե ուշադիր նայես սեքսի վերաբերյալ Աստծո տեսակետին, կտեսնես, որ հաճախ դրանք հակասության մեջ են գտնվում քո մշակույթի ընդհանուր տեսակետների հետ: Ուրեմն, ո՞վ է ճիշտ:

Աստված շատ հստակ ուղերձ է տալիս մեզ, թե որքանով է վտանգավոր քո մշակույթի ցուցումներին հետևելը:

Հռոմեացիներին 12:1-2.

«Ուրեմն, աղաչում եմ ձեզ, եղբայրներ ը, Աստծո ողորմությամբ, որ ձեր մարմինները ներկայացնեք որպես կենդանի զոհ, սուրբ, Աստծուն ընդունելի, որ ձեր իմաստալից պաշտամունքն է: Եվ մի՛ կերպավորվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվեք ձեր մտքի նորոգությամբ, որ քննեք, թե որն է Աստծո կամքը՝ բարին, ընդունելին և կատարյալը»:

Մեզ ուղղված՝ Աստծո ուղերձը շատ հստակ է. «Մի՛ հարմարվիր քո մշակույթի հետ այնպես, որ դրա մեջ տեղավորվես առանց նույնիսկ մտածելու»: Սա մեծ վտանգ է, որին մենք հանդիպում ենք մեր մշակույթում: Շատ հեշտ է ընկնել այն սխալ կարծիքի մեջ, որ եթե բոլորը սեքսի մասին ունեն որոշակի տեսակետ, ուրեմն պետք է որ դա ճիշտ լինի: Սակայն ուրիշների մտածելակերպը չի որոշում, թե ինչ է Աստված քեզ համար կանխորոշել, որը լավագույնն է լինելու քեզ համար:

Վերը նշված համարի մեկ այլ թարգմանության մեջ ասվում է. «Թույլ մի՛ տուր, որ աշխարհը քեզ ձևակերպի իր պատկերով»: Քո մշակույթը հենց սա է ուզում, որ դու անես. թույլ տաս, որ աշխարհը քո մեջ ներմուծի այն, ինչ ինքն է ասում սեքսի մասին. «բոլորն էլ այդպես են վարվում»:

Բայց եթե դու թույլ տաս, որ քո մշակույթը որոշի, թե որն է քեզ համար լավագույնը, դրա մասին էլ Աստված ասում է, որ «աշխարհը քեզ կիջեցնի իր ոչ հասուն մակարդակին»: Այսպիսով, ո՞վ է ճիշտ. քո մշակույթը, թե՞ Աստված: Երկուսը միասին չեն կարող ճիշտ լինել:

Չնայած այն բանին, որ քո մշակույթը սեքսի վերաբերյալ ուժեղ ուղերձ է հղում չամուսնացածների կյանքում, Աստված իրականում լավագույն տեսակետն ունի այս հարցում: Ըստ էության՝ Նա՛ է ստեղծել մեզ, և Նա՛ գիտի, թե որն է լավագույն ձևը քո կյանքի այս ասպարեզում լիառատ բավարարվածություն գտնելու համար:

2. Ինչպիսի՞ն է սեռական փոխհարաբերությունների վերաբերյալ քո ընտանիքի պատմությունը:

Քո ընտանիքը քո կյանքի վաղ շրջանում ազդեցություն է ունեցել սեռական կյանքի վերաբերյալ քո պատկերացումների վրա: Ինչպիսի՞ փոխհարաբերություն են ունեցել քո ծնողները: Նրանք միասի՞ն էին ապրում, սիրո, հաղորդակցության ու համատեղ կյանքի լավ օրինակ էին ծառայում: Նրանք կարո՞ղ էին համարվել առողջ և հասուն փոխհարաբերության օրինակելի գույգ:

Գուցե նրանք հակառակ դե՞պքն էին ներկայացնում: Քո մանկությունն անցել է ամուսնալուծված ծնողների հե՞տ: Քո ծնողներից մեկը կամ երկուսն էլ մշտապես բացակայե՞լ են քո կյանքից:

Նույնիսկ եթե քո ծնողներն աստվածապաշտ փոխհարաբերության դրական օրինակ են ծառայել, դա չի նշանակում, որ դու ինքնաբերաբար կհետևես նրանց օրինակին: Ցավալի է, սակայն շատ ծնողներ չեն կարողանում իրենց երեխաներին կարևոր դասեր սովորեցնել սեռական կյանքի վերաբերյալ, որպեսզի նրանց պաշտպանեն ընդունված արատավոր մշակույթի և ընկերների ուժեղ ազդեցությունից: Նրանք ապրում են լրիվ ուրիշ կենսակերպով, քան իրենց ծնողները:

Իսկ ի՞նչ կասես քո տատիկ-պապիկների ու մյուս հարազատների մասին: Ի՞նչ ուղերձ է նրանց կյանքի օրինակը հղում քեզ: Արդյո՞ք նրանք դրական օրինակ են ծառայել սեռական կյանքի վերաբերյալ աստվածապաշտական տեսակետի առումով: Կամ գուցե հակառակը:

Իսկ քո քույրերն ու եղբայրները, հասակակից բարեկամները: Նրանք ինչ օրինակ են ծառայել քեզ համար սեռական կյանքի ու չամուսնացած մարդու վերաբերյալ: Արդյո՞ք նրանց համոզմունքներն ու քայլերը այնպիսի պատկեր են ձևավորում, ինչպիսին Աստված է սեռական կյանքի վերաբերյալ ներկայացնում Աստվածաշնչում:

Երբ քո շուրջն ես նայում, ինչքա՞ն հաճախ ես տեսնում, որ երեխաները մեծանում են միայնակ ծնողի հետ և նորից կրկնում են նույն շրջապատույտը՝ ունենալով երեխաներ նախքան ամուսնանալը: Անառողջ ընտանիքների ավանդույթները ձևավորվում են սեռական կյանքի վերաբերյալ նրանց մշակույթի ազդեցության ներքո, և դրանով իսկ վնասը շարունակում է փոխանցվել հաջորդ սերնդին:

Ցավալիորեն այսօր շատ կան երիտասարդներ, ովքեր սեռական բռնության են ենթարկվել ընտանիքի անդամի կամ մոտիկ բարեկամի կողմից: Այդ բռնության հետևանքով նրանց ներսում աղավաղված ու վնասակար պատկերացում է կազմվել սեռական կյանքի մասին: Վնասը կմեծանա, երբ այս մանուկը կամ պատանին մեծանալով դառնա չափահաս:

Քո ընտանեկան անցյալը, սեռական կյանքի վերաբերյալ քո ընտանիքի անդամների պատկերացումներն ու արարքները որոշակիորեն ազդում են քո կյանքի վրա: Ինչպիսին էլ լինի այդ ազդեցությունը՝ դրական, թե բացասական, դու, միևնույն է, ունես քո սեփական որոշումները կայացնելու կարողություն: Դու՛ր պետք է որոշես՝ հետևել քո ծնողների և ընտանիքի օրինակին: Կամ էլ կարող ես քո գլխավոր առաջնահերթությունը դարձնել՝ հետևել այն բանին, ինչ Աստված է ասում Աստվածաշնչում սեռական կյանքի մասին:

3. Ի՞նչ է սեռական ազատությունը:

Երբ խոսքը վերաբերում է սեռական կյանքի մասին հավատալիքներին ու մոտեցումներին, ամենատարածված ուղերձներից մեկը, որ մեր մշակույթն այսօր բերում է երիտասարդների կյանքում, հետևյալն է. «Դու ազատ ես ինքդ որոշելու հարցում»: Սեռական ազատության մասին ողջ խոսակցությունը տպավորություն է ստեղծում, որ դու կարող ես ճիշտ որոշումներ կայացնել՝ պարզապես լսելով քո սրտի ձայնին ու քո մշակույթից եկող տարաբնույթ ձայներին:

Շատ անգամ նրանք, ովքեր խոսում են սեռական ազատության մասին, շտապում են մատնանշել, որ դու չպետք է սահմանափակված լինես այն հին պատկերացումներով, որոնք քո ծնողներն ունեին սեռական կյանքի մասին:

ա. Սահմանում, որը համապատասխանում է Աստծո չափանիշին:

Ի՞նչ է, ուրեմն, սեռական ազատությունը: Արդյո՞ք դա նշանակում է, որ դու հավատալու և ցանկացած բան անելու համար ազատ ես: Չէ՞ որ դա քո մարմինն է:

Ահա մի սահմանում, այն երբեք չես լսի կինոնկարներում: Դա սեռական կյանքի վերաբերյալ սահմանում է, որը համապատասխանում է Աստծո չափանիշին:

Սեռական ազատություն. դա ազատություն չէ՝ քո ընկերուհու (ընկերոջ) կամ կնոջ (ամուսնու) հետ անել այն, ինչ ցանկանում ես: Սեռական ազատությունը կարողություն է՝ քո ընկերուհու (ընկերոջ) կամ կնոջ (ամուսնու) հետ անել այն, ինչ ձիշտ է: Դու այս հասկացողությունն ու կարողությունը կարող ես ստանալ Աստծուց և Նրա Խոսքից՝ Աստվածաշնչից:

Սեռական ազատության վերաբերյալ այս սահմանումը վերցված է Institute in Basic Life Principles-ից:

Դիտարկենք սեռական կյանքի այս սահմանման սկզբունքները: Ազատություն՝ չի նշանակում, որ սահմաններ չկան: Իրական ազատությունը գործում է սահմանների մեջ:

Սեռական ազատություն ունեցող անձնավորությունը նա է, ով կարողանում է ձիշտ վարվել բոլոր փոխհարաբերությունների մեջ: Իսկ որտեղի՞ց դու կարող ես ստանալ այս կարողությունը: Աստծուց: Սա էլ չի նշանակում, որ դու մյուսներից ավելի ուժեղ ես: Խոսքը վերաբերում է ինքնակառավարմանը, որը նշանակում է՝ կարողանալ վերահսկել սեփական մտքերը, զգացմունքներն ու վարքը, որպեսզի դրանք գործեն Աստծո կողմից հաստատված սահմանների մեջ:

Իրական սեռական ազատությունը ներառում է նաև իմանալը, թե ինչպես պետք է վարվել տարբեր փոխհարաբերությունների մեջ: Եվ ո՞րն է այս մտքերի ու որոշումների հիմքը: Աստվածաշունչը՝ Աստծո Խոսքը, որը լավագույն աղբյուրն է հասկանալու համար, թե տարբեր փոխհարաբերությունների մեջ ինչպես է պետք ձիշտ վարվել: Եվ հենց այստեղ էս դու հանդիպում կոնֆլիկտին, թե ինչ է սեռական ազատության մասին ասում քո մշակույթը:

Քո մշակույթը քեզ կասի՝ թույլ մի՛ տուր, որ որևէ մեկը քեզ ասի, թե ինչ պետք է անես: Դու ազատ ես քո սեփական որոշումները կայացնելու հարցում: Բայց դա իրական սեռական ազատությունը չէ: Սա «ոչ հասուն մակարդակ է», որի մասին Հռոմեացիներին 12:2-ն է ասում: Երբ պատանին աղաղակում է՝ «Ես կարող եմ անել այն ամենը, ինչ ուզում եմ», դրանով իսկ ցույց է տալիս, թե որքան հասուն չէ նա ներքուստ:

Եթե դու ուզում ես այնպիսի սեռական փոխհարաբերություն ունենալ, որն իրական սեր և իրական հաճույք կրերի քո կյանք՝ առանց ավստասանքի, ուրեմն պետք է հետևես սեռական ազատության վերաբերյալ Աստծո տեսակետին: Եթե դու հետևես սեռական ազատությանը քո մշակույթի տեսանկյունից, այն քեզ կտանի մեղքի ճանապարհով, որն իրականում Աստծո նպատակը չէ քեզ համար: Եվ այդ դեպքում դու երբեք չես հասնի այն բանին, ինչ Աստված է քեզ համար ծրագրել:

բ. Իսկ իմ սեռական ինքնությունը՞ նրա:

Վերջին տարիներին երիտասարդների շրջանում աճող հակվածություն կա տարբեր գույքընկերների հետ սեռական փորձառություն ունենալու: Ավելի ու ավելի են պատանիներին քաջալերում, որ նույնասեռ հարաբերությունները դիտեն որպես նորմալ: «Արա՛ ինչ ուզում ես». - սա է հիմնական ուղերձը: Շատ պատանիներ ճնշում են զգում իրենց վրա, որը ևս մղում է նրանց՝ համընթաց գնալ իրենց մշակույթի հետ:

Քո կյանքի մասին մտածելիս ի՞նչ անձնական մարտահրավերներ ես ունեցել այս ասպարեզում: Քո մշակույթի մեջ եղած ձայները մղո՞ւմ են քեզ սեռական փորձություն ունենալու:

Իսկ ի՞նչ է ասում Աստված քո սեռական ինքնության վերաբերյալ: Աստվածաշունչը շատ հստակ է խոսում այս մասին:

Ծննդոց 1:27.

«Այսպես Աստված Իր պատկերով ստեղծեց մարդուն՝ Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց»:

Աստված մեզ կամ տղամարդ է ստեղծել, կամ՝ կին: Աստված սխալներ չի անում: Հաջորդ հատվածում սաղմոսերգուն ասում է, թե ինչպես է Աստված ստեղծել մեզ:

Սաղմոս 139:13-14.

«¹³.Քանի որ Դու ես ստեղծել իմ երիկամունքը. իմ մոր արգանդում Դու ես ինձ ծածկել: ¹⁴.Փառաբանելու եմ Քեզ, քանի որ ահավոր ու հրաշալի կերպով ստեղծվեցի: Քո գործերը զարմանալի են, ու իմ անձը դա լավ գիտե»:

Քո մշակույթը քեզ կարող է ասել, որ քո գոյությունը պատահականության արդյունք է: Սակայն Աստված հստակ ասում է, որ Ինքն ակտիվ կերպով մասնակցել է քո կյանքի ստեղծմանը, նույնիսկ երբ դու դեռ ծնված չէիր:

Շատ երիտասարդներ լսում են, որ իրենք ծնվել են համասեռամոլ կամ լեզբուհի լինելու: Սակայն սա խիստ հակասում է այն բանին, ինչ Աստված է ասում Աստվածաշնչում:

Կա՞ն այսօր երիտասարդներ, որոնք հրապուրվում են նույնասեռ հարաբերություններով: Այո՛: Ինչո՞ւ: Մի պարզ ճշմարտություն քեզ կարող է օգնել սա հասկանալու: Մատանան ուզում է վերցնել ցանկացած լավ բան, որն Աստված ստեղծել է, և այդ ստեղծածն ուզում է խեղաթյուրել ու խառնակություն բերել քո կյանք, որպեսզի դու մերժես Աստծո ճշմարտությունն ու հետևես սատանայի ստուրջյանը:

Դու պետք է որոշես քո մտքերն ուղղել Աստծո ճշմարտությանը: Քո զգացմունքները չեն կարող որոշել, թե որն է ճիշտ քեզ համար: Աստծո ճշմարտությունը ճիշտ է՝ անկախ նրանից, ընդունո՞ւմ ես այն, թե՞ ոչ: Դու պետք է որոշում կայացնես՝ սրտաբաց ընդունել Աստծո այն ճշմարտությունը, որ Նա քեզ որպես տղամարդ է ստեղծել, կամ ստեղծել է որպես կին: Դա կախված չէ քո զգալուց, դա կախված է այն բանից, թե ինչ մարմին է Աստված քեզ տվել:

Այն անձնավորությունը, ով նախկինում ներգրավված է եղել համասեռամոլության մեջ, դեռևս կարող է ուժեղ ցանկություն զգալ նույնասեռ հարաբերությունների հանդեպ: Սակայն Աստված ուզում է, որ բոլորը սրտանց ընդունեն Ի՛ր ճշմարտությունը:

Դու կարիք ունես ինքդ քեզ նայելու հայելու մեջ և ասելու. «Աստված է ինձ ստեղծել: Նա չի սխալվել: Ես որոշում եմ կանգնել Նրա ճշմարտության հիմքի վրա, այն, թե ինչպիսին է Նա ինձ ստեղծել»:

Քեզ կարող են շատ գայթակղություններ և անհանգստություններ հանդիպել, երբ հարցը վերաբերում է քո սեռական ինքնությանը: Սակայն համոզվա՛ծ եղիր, որ Աստված պատրաստ է քեզ օգնել, որպեսզի հասկանաս Նրա ճշմարտությունը և ըստ դրա քայլես առօրյա կյանքում:

4. Ո՞րն է Աստծո չափանիշը չամուսնացած մարդու համար:

Աստված մարդուն ստեղծել է, որ լինի կամ տղամարդ, կամ՝ կին: Նա մեզ ստեղծել է սեռական փոխհարաբերություններ ունենալու ցանկությամբ ու կարողությամբ: Սակայն սեքսն Աստծուց պարզն է, ոչ թե կարիք: Դու կարիք ունես օդի, սննդի և ջրի, այլապես՝ կմահանաս: Սակայն դու կարիք չունես սեռական հարաբերություն ունենալու, որպեսզի ապրես: Դու սեռական հարաբերության կարիք չունես երջանիկ լինելու համար:

Աստված շատ պարզ չափանիշ ունի սեռական հարաբերության առումով: Սեքսը պետք է պահել միայն մեկ անձնավորության՝ քո կնոջ կամ ամուսնու համար, այն էլ՝ միայն ամուսնանալուց հետո:

Չամուսնացած մարդկանց համար Աստծո չափանիշը շատ հստակ է՝ նրանք չպետք է մտնեն սեռական փոխհարաբերությունների մեջ:

10 պատվիրանների մեջ նույնպես Աստված հստակեցնում է, որ մենք չպետք է շնություն գործենք: Ամուսնացած մարդը շնություն է գործում, երբ իր կողակցից բացի մեկ ուրիշի հետ սեռական հարաբերություն է ունենում:

Հիսուսը վերցրեց այս պատվիրանն ու ավելի կոնկրետացրեց: Դու նույնիսկ քո մտքում չպետք է սեռական հարաբերություն ունենաս մեկ ուրիշի հետ:

Մատթեոս 5:27-28.

«Լսե՛լ էք, որ նախնիներին ասվեց՝ «Մի՛ շնացիր»:՝ 28. Բայց ես ձեզ ասում եմ. ով մի կնոջ նայի նրան ցանկանալու համար, արդեն շնություն է արել իր սրտում»:

Հիսուսը սկսում է 10 պատվիրաններում սահմանված ֆիզիկական արարքով, իսկ հետո հստակեցնում, որ երբ դու դա անում ես քո մտքում, դա նույնպես մեղք է:

Մտային գայթակղությունների հետ գործ ունենալը կարող է լուրջ պայքար լինել քո կյանքում: Դու պետք է սովորես հաղթահարել այս գայթակղությունները: Աստված պատրաստ է քեզ օգնել: Այս թեման ավելի մանրամասն քննարկված է *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի *Փորձություններ* բաժնում:

Ինչպե՞ս կարող ես սեռական իմաստով մաքուր մնալ մինչև ամուսնությունը: Դա քեզնից, իրոք, լուրջ որոշում կպահանջի: Կարևորներից մեկն այս հարցում որոշում կայացնելն է. քո կյանքի այս հատվածը պահել միայն մեկ՝ ամուսնությամբ կապված անձնավորության համար՝ ամուսնությունից հետո:

Իսկ եթե որևէ մեկն արդեն ներգրավվա՞ծ է եղել սեռական հարաբերությունների մեջ:

5. Որոշո՛ւմ կայացրու՝ ապրել սեռական մաքրության մեջ:

Դու չես կարող հետ գնալ և փոխել քո անցյալը: Եթե անցյալում ապրել ես սեռական ակտիվ կյանքով, ապա որոշո՛ւմ կայացրու՝ այսօրվանից սկսած ուրիշ կյանքով ապրելու: Դո՛ւ ես որոշողը՝ մինչև կյանքիդ վերջը ապրել սեռական մաքրության մեջ: Ի՞նչ է սեռական մաքրությունը: Դա սեռական փոխհարաբերությունների վերաբերյալ Աստծո չափանիշին համապատասխան ապրելն է:

Աստված քեզ չի նայում որպես ձախողակի կամ վնասված ապրանքի: Նա սիրում է քեզ և պատրաստ է ներել, եթե գաս ու խոստովանես քո մեղքերը՝ ինչ էլ որ արած լինես:

Մի անգամ մի խումբ մարդիկ մի կնոջ բերեցին Հիսուսի մոտ: Նրանք ասացին, որ այդ կնոջը բռնել են շնության մեջ: Նրանք Հիսուսից պատասխան պահանջեցին. քարկոծե՞ն նրան, թե՞ ոչ: Նրանք փորձում էին թակարդը գցել Հիսուսին: Հին Կտակարանի օրենքն ասում է, որ շնության մեջ բռնված անձնավորությանը պետք է քարկոծել մինչև մահ: Սակայն Հիսուսի օրերում նրանք ապրում էին հռոմեական օրենքի ներքո, որը շնության համար մահապատիժ չէր պահանջում:

Վերջապես Հիսուսը պատասխանեց նրանց. «Ով ձեր մեջ առանց մեղքի է, թող գցի առաջին քարը»: Շուտով բոլորը հեռացան, և Հիսուսը խոսեց այդ կնոջ հետ:

Հովհաննես 8:10-11.

«Երբ Հիսուսը գլուխը բարձրացրեց ու կնոջից բացի ոչ ոքի չտեսավ, ասաց նրան. «Կի՛ն, ո՞ւր են նրանք, որ քեզ մեղադրում էին: Ոչ մեկը քեզ չդատապարտե՞ց»:

11. Նա ասաց. «Ոչ մեկը, Տե՛ր»: Եվ Հիսուսն ասաց նրան. «Ո՛չ էլ Ես եմ քեզ դատապարտում. գնա՛ և այլևս մի՛ մեղանչիր»:

Հիսուսի պատասխանը խոսում է երկու հարցերի շուրջ և վերաբերում է նրանց, ովքեր Աստծո չափանիշից դուրս սեռական ակտիվ կյանքով են ապրում: Առաջին, Հիսուսը չի աշխատում դատապարտել քեզ, Նա պատրաստ է ներել քեզ: Երկրորդ, Հիսուսն այս կնոջն ասաց. «Գնա՛ և այլևս մի՛ մեղանչիր»: Սա կոչ է՝ փոխվելու և սեռական մաքուր կյանք ընտրելու:

Անկախ այն բանից, եղե՞լ ես դու սեռական հարաբերությունների մեջ ներգրավված, թե ոչ, քեզ համար մարտահրավերն այսօր շատ պարզ է. կարո՞ղ ես որոշել այսօրվանից ի վեր սեռական մաքրության մեջ ապրել: Աստված կօգնի քեզ, և Նա ծրագիր ունի քո կյանքի համար, որը լի է հնարավոր լավագույն ընկերներով:

Բ. Հանդիպել/Ընտրել այն անձնավորությանը, ում հետ պետք է ամուսնանաս:

Եթե դու 18-ից 28 տարեկանների շրջանում հարցում անցկացնես, նրանց մեծ մասը քեզ կասի, որ կցանկանային ամուսնանալ մի օր: Ոմանք ծրագրեր ունեն. «Սկզբում ես ուզում եմ բուհն ավարտել»: Մյուսներն ասում են. «Ես ցանկանում եմ և պատրաստ եմ, պարզապես պետք է ճիշտ անձնավորություն գտնեմ»: Այս դեպքում հարց է առաջանում. «Ինչպե՞ս կարող ես վստահ լինել, որ իրոք սիրահարված ես: Արդյո՞ք այդ սերը քեզ կուղեկցի տվյալ մարդու հետ ամուսնական ողջ կյանքի ընթացքում»:

Ինչպե՞ս գտնել ճիշտ անձնավորություն՝ ամուսնանալու համար: Այս ընթացքը երկրից երկիր, նույնիսկ՝ ընտանիքից ընտանիք տարբերվում է: Որոշ ընտանիքներում ծնողներն են լուծում իրենց երեխաների ամուսնության հարցը: Քո դեպքում դա կարող է լրիվ ուրիշ լինել:

Սակայն ինչ ընթացք էլ դու գործածես, այն անձնավորության ընտրությունը, ում հետ դու պիտի ամուսնանաս, քո կյանքի ամենակարևոր որոշումներից մեկն է լինելու: Երջանիկ ամուսնության առանցքային անհրաժեշտություններից մեկը սովորելն է, թե ինչպես առողջ փոխհարաբերություններ ունենալ հակառակ սեռի ներկայացուցիչների հետ:

Տվյալ անձնավորությանը ամուսնության համար ընտրելու և նրա հետ ժամադրվելու հարցը շատ կարևոր է և մանրամասնորեն կքննարկվի այլ դասերի ընթացքում: Այս դասընթացին մենք ընդամենը ցանկանում ենք անդրադառնալ սույն թեմայի վերաբերյալ չորս հարցերին և տալ հիմնական տեսակետ ժամադրության հետ կապված:

1. Ո՞րն է ժամադրության նպատակը:

Ինչո՞ւ են մարդիկ ժամադրություններ ունենում: Մեկից ավելի ճիշտ պատասխաններ գոյություն ունեն: Դու հնարավորություն կունենաս այս թեմայի վերաբերյալ քո կարծիքը գրել, երբ լրացնելու լինես Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի՝ «Ժամադրություն»՝ 1-ին հարցը: Ահա մի քանի պատասխաններ, որոնք ուրիշներն են տվել այդ հարցին:

- Նրան ավելի լավ ճանաչելու համար:
- Աճելու և հասարակական հասունություն ունենալու համար:
- Իմանալ, թե ինչպես են աղջիկները (կամ տղաները) մտածում:
- Իմ զգացմունքները նրանց հետ կիսելու համար:
- Ամուսնության նախապատրաստվելու համար:
- Սովորել հանգիստ (հարմարավետ) զգալ հակառակ սեռի մարդկանց շրջապատում:

Դու կարող ես ուրիշ պատճառներ էլ նշել, և դա նորմալ է: Բայց որտեղի՞ց են գալիս ժամադրության վերաբերյալ քո պատկերացումները: Դրանք հիմնված են Աստվածաշնչի ճշմարտությունների՞ վրա, թե՞ դու վերցրել ես քո մշակույթից:

Ի՞նչ պատճառներ պետք է ունենաս ժամադրվելու համար, եթե ճշմարիտ քրիստոնյա ես, ով որոշել է հետևել Հիսուսին իր կյանքի այս ասպարեզում: Դրանք կարող են ներառել վերը նշված պատճառներն էլ: Եթե դու Հիսուսին խնդրեիր, որ քեզ տար ժամադրություն ունենալու պատճառների Իր ցուցակը, ի՞նչ ես կարծում, ի՞նչ կգրեր Նա այդ ցուցակում:

Ահա երկու հանգամանքներ, որոնք կարող են կարևոր տեղ ունենալ քո ժամադրության մեջ:

- ա. Սովորել սեր տալ և ստանալ, հատկապես՝ ազապե սերը՝ Աստծո սերը:
- բ. Դու պետք է երկուսիդ էլ հնարավորություն ընձեռես Աստծուն ավելի մոտենալու համար:

Եթե դու արդեն անցել ես *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի՝ **Մեր և ինքնաբերականություն** բաժինը, ուրեմն անդրադարձել ես Աստվածաշնչում տեղ գտած չորս տեսակի սերերին: Հունարենում սեր բառի համար չորս բացատրություններ կան, իսկ «ագապեն» սիրո այն տեսակն է, որը նկարագրում է Աստծո սերը, որ ունի մեր հանդեպ: Նա մեզ խորն է սիրում, սակայն հարցը չի վերաբերում ռոմանտիկ զգացմունքներին:

«Ագապեն» սիրո լավագույն նկարագրությունը գտնվում է Ա Կորնթացիներին 13-րդ գլխում, որտեղ սերը նկարագրվում է որպես համբերատար: Ի՞նչ կապ ունի համբերությունը ռոմանտիկայի հետ: Հետո հատվածն ասում է՝ «...սերը բարի է», այնուհետև թվարկվում են սիրո ավելի գործնական արտահայտություններ առողջ փոխհարաբերություններում: Դրանցից ոչ մեկը ռոմանտիկ չէ: Սակայն այդ ամենը իրական սիրո մասին է:

Վերը նշված երկրորդ կետը (2.) հստակեցնում է, որ եթե մենք ինչ-որ մեկի հետ ժամադրվում ենք, ապա դա պետք է երկուսիս համար էլ Աստծուն ավելի մոտենալու հնարավորություն լինի:

Եթե այս երկու գործողությունները տեղի չեն ունենում քո ժամադրությունների ժամանակ, ապա դու բաց ես թողնում ժամադրության ամենահաճելի բաժինները: Թեև դրանք, հավանաբար, ամենադժվարն են ժամադրության մեջ իրականացնելու համար:

Ժամադրությունն անկեղծ ընկերություն զարգացնելու մասին է: Դա սեռական հարաբերություններ փորձելու համար չէ: Եթե դու ամուսնացած չես և հետաքրքրված ես ժամադրությամբ, համոզված եղիր, որ դա անում ես Աստծո առաջ բաց սրտով՝ խնդրելով Նրան առաջնորդել քեզ այդ փոխհարաբերության մեջ:

2. Ե՞րբ է անձնավորությունը պատրաստ ժամադրություն սկսելու համար:

Ի՞նչ պատասխան ունես դու այս հարցին. ե՞րբ է անձնավորությունը պատրաստ ժամադրություն սկսելու համար: Չկա մի պարզ պատասխան, որը կհամապատասխաներ ցանկացած անձնավորության: Աստված մեզնից ամեն մեկին մյուսից մի փոքր տարբեր է ստեղծել: Եթե ամուսնացած չես, ամենակարևոր հարցը, որ դու կարող ես տալ, հետևյալն է. «Աստված իմ, ի՞նչ ես կարծում, ես պատրաստ եմ ժամադրվելու համար»:

Ահա մի քանի մտքեր, որոնք կարող են օգնել՝ կողմնորոշվելու, թե արդյո՞ք տվյալ անձնավորությունը պատրաստ է ժամադրություն սկսելու:

- ա. Երբ գիտես ժամադրության օգուտների և վտանգների մասին:
- բ. Երբ դու անձամբ կազմել ես չափանիշների քո ցուցակը (ժամադրության վերաբերյալ քո կանոնները):


- գ. Երբ դու Աստծո առաջ որոշել ես երբեք չիջեցնել քո չափանիշները: Որովհետև, եթե դու զիջես, սատանայի փորձությունները կուժեղանան, իսկ դու կթուլանաս և շատ շուտով կընկնես մեղսալից մտքերի ու գործողությունների մեջ:
- դ. Երբ դու գիտես, թե ինչպես ընկերություն անել սեռական գրավչությունից բացի այլ հիմքերի վրա:
- ե. Երբ դու անվտանգ ես քո բնավորության և ինքնակառավարման հարցում այն անձնավորության հետ փոխհարաբերությունների մեջ, ում հետ ծրագրում ես ժամադրություն սկսել: Երբ դու ապահով ընկեր ես:

Այս թեմաներից ամեն մեկը կարող էր շատ ավելի մանրամասն քննարկվել: Սակայն դիտարկենք բ. կետը. «Երբ դու անձամբ կազմել ես չափանիշների քո ցուցակը»: Սրանք ժամադրության վերաբերյալ քո կանոններն են: 3-րդ գլխում մենք խոսեցինք սահմանների մասին. սա հենց այդ մասին է: Դու լավ ապագա կունենաս, երբ որոշես քո կյանքի այս ասպարեզում Աստծուն դնել առաջին տեղում և զարգացնել սահմաններ, որոնք Նրան պատիվ կբերեն:

3. Որո՞նք են ժամադրության օգուտները:

Դու հնարավորություն կունենաս այս հարցի վերաբերյալ քո պատասխանները տալ Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի և 3-րդի պարագայում: Եթե ամուսնացած չես, քեզ համար կարող է օգտակար լինել խոսել ավելի տարիքով մարդկանց հետ, ովքեր մի քանի տարի է (կամ ավելի շատ)՝ ամուսնացած են, որպեսզի լսես նրանց պատասխաններն այս հարցի վերաբերյալ:

Դիմացիոն ճանաչելը և նրա հետ քո ողջ կյանքն անցկացնելու հնարավորության մասին երազելը կարող է սիրահարվելու մի գեղեցիկ ընթացք լինել: Ուրեմն ո՞րն է լավագույն ձևը, որ դա տեղի ունենա քո կյանքում:



Այս պատկերազարդումը ցույց է տալիս հակառակ սեռի մարդկանց միջև սիրո առողջ փոխհարաբերություններ զարգացնելու աստվածաշնչյան պատկերը:


Ընկերների հետ մոտ փոխհարաբերություններ զարգացնելու լավագույն ձևն այն է, որը ձեզ երկուսիդ ավելի է մոտեցնում Աստծուն: Պատկերազարդումը ցույց է տալիս, որ երբ երկուսդ էլ ձեր կյանքում Աստծուն դնեք առաջինը, դրանով ավելի կմոտենաք Աստծուն և միմյանց:

Այսպիսով, արդյո՞ք դու պատրաստ ես Հիսուսին թույլ տալ, որպեսզի «այո» կամ «ոչ» ասի ինչ-որ մեկի հետ ընկերություն անելու վերաբերյալ: Դու գուցե ասես՝ «Ես գիտեմ, թե ով է ինձ համար ամենավաղը: Ես ինքնուրույն կկայացնեմ այս որոշումը»: Իրո՞ք: Եթե դու իսկապես ուզում ես քո կյանքի այս ասպարեզում ունենալ հնարավոր լավագույն ապագան, ապա թո՛ւյլ տուր Աստծուն, որպեսզի Նա ընդունի քո կյանքի այդ որոշումները:

4. Որո՞նք են ժամադրության վտանգները:

Հնարավոր է՝ դու արդեն ունես այս հարցի բոլոր ճիշտ պատասխանները: Դա այն պատճառով է, որ քո անձնական կյանքում ունեցել ես բազմաթիվ վատ ժամադրություններ: Շատ կան տխուր պատմություններ երիտասարդ տղաների ու աղջիկների մասին, որոնք հասկացել են, որ վատ որոշումներ են կայացրել իրենց ժամադրության ընթացքում, բայց արդեն շատ ուշ է եղել:

Եթե կա մի ժամանակ, երբ դու պետք է շատ զգույշ լինես ապահով ընկեր ընտրելու հարցում, ապա դա ժամադրության այս ասպարեզում է: Որո՞նք են այն ազդանշանները, որոնք քեզ զգուշացնում են գալիք վտանգի մասին:




Այս պատկերազարդումները ցույց են տալիս, թե ինչ է տեղի ունենում երբ քո ընկերուհին (ընկերը) ճշմարիտ քրիստոնյա չէ, կամ հետաքրքրված չէ Աստծուն մոտենալու հարցով: Հնարավոր է՝ դու մոտենում ես Աստծուն (1.), բայց քո ընկերուհին (ընկերը)՝ ոչ, ապա ինչքան շատ դու մոտենաս Աստծուն, այնքան շատ կհեռանաս քո ընկերուհուց (ընկերոջից):

Եթե դու որոշես ավելի խորացնել քո փոխհարաբերությունը մի ընկերուհու (ընկերոջ) հետ, ով չի ուզում մոտենալ Աստծուն, դու ստիպված կլինես հեռանալ Աստծուց (2.): Այս երկու պատկերազարդումները մի պարզ նպատակ են հետապնդում՝ ցույց տալու, որ եթե դուք երկուսդ էլ չեք մոտենում Աստծուն, ապա այդ փոխհարաբերությունը քեզ կզցի բազմաթիվ խնդիրների ու գլխացավանքների մեջ:

Ցանկացած փոխհարաբերություն, որը քեզ հեռացնում է Աստծուց, քեզնից կլիսի այն ապագան, որն Աստված ծրագրել է քեզ համար: Մի՛ խաբիր ինքդ քեզ՝ ասելով, որ այդ փոխհարաբերությունն ավելին է, քան այն ամենը, ինչ Աստված է քեզ առաջարկում հավիտյան:

Ժամադրության մեկ այլ վտանգ է՝ նախքան ամուսնությունը սեռական ակտիվություն դարձնելու գայթակղությունը: Պահպանակի օգտագործումը սեռական կյանքը ապահով չի դարձնում: «Ապահով մեղք» հասկացություն գոյություն չունի: Եթե դու քո կյանքը հանձնում ես Հիսուսին, իսկ հետո բռնում ես մեղքի ճանապարհը, այն անպայման հիասթափություն և ավստասանք կրերի քո կյանքում:



Նրանք, ովքեր ներգրավվում են սեքսի մեջ նախքան ամուսնությունը (լինի սեռական հարաբերություն կամ այլ անպարկեշտ ֆիզիկական շփում), լրջորեն կվնասվեն Աստծո հետ իրենց փոխհարաբերության հարցում: Դա նաև հանցանքի պատ կատեղծի այդ երկու անձնավորությունների միջև: Դա կդժվարացնի նրանց ազատ շփումը միմյանց հետ: Նրանք երկուսն էլ կսկսեն իրենց չբավարարված ու միայնակ զգալ, որովհետև նրանց փոխհարաբերությունները կխզվեն թե՛ Աստծո հետ, թե՛ միմյանց հետ:


Ոչ թե ֆիզիկական սեռական հարաբերությունը, այլ սերն է, որ մեզ ամուր պահում է միասին և կարողություն տալիս սիրո մտերիմ փոխհարաբերություն զարգացնել:

Կողոսացիներին 3:14.

«Եվ այս բոլորի վրա հազեք սերը, որ կատարելության կապն է»:

Եթե դու քեզնից ավելի տարիքով մարդկանց հարցնես, թե ինչի համար են նրանք ափսոսում՝ կապված իրենց ժամադրությունների հետ, դու երբևէ չես լսի, որ ինչ-որ մեկն ասի. «Ես ափսոսում եմ, որ ավելի շատ չեմ զբաղվել սեքսով, երբ ժամադրվում էի նրա հետ»: Ընդհակառակը, քեզ հետ անկեղծ եղողներն ավելի շուտ կասեն. «Ես կցանկանայի ավելի ուշադիր լինել՝ սեքսի և չամուսնացած մարդու վերաբերյալ Աստծո սահմաններին հետևելիս: Ես կցանկանայի սպասել, հապաղել սեռական հարաբերություն ունենալու հարցում»:

Եվս մեկ պատկերազարդում, որը կարող է օգնել՝ բացատրելու փոխհարաբերություն կառուցելու վերաբերյալ աստվածաշնչյան մոտեցումը, հետևյալ բուրգի օգտագործումն է:



Փոխհարաբերություն կառուցելու աստվածաշնչյան մոտեցումն ամուր հիմք է հանդիսանում այդ փոխհարաբերության աճի համար: Աշխարհիկ տեսակետը հակառակն է անում. այն ոչ մի հիմք չի ապահովում և հեշտությամբ քանդվում է:

Թույլ մի՛ տուր, որ աշխարհը քեզ ձևավորի ըստ իր պատկերի: Ընդհակառակը, այքերդ հառի՛ր Հիսուսին և որոշի՛ր, որ Հիսուսին հետևելը դարձնես քո գլխավոր առաջնահերթությունը: Հիսուսը քո կյանքի մեջ կբերի նրան, ով ապահով, պատասխանատու, ինքնակառավարվող, բարի, հոգատար և աստվածապաշտ ընկեր է:

Գ. Ամուսնություն:

Աստված, հաշվի առնելով կյանքում ունեցած քո բոլոր անձնական փոխհարաբերությունները, ցանկանում է, որ քո ամուսնությունը լինի ամենայուրահատուկը, որը կզիջի միայն Աստծո հետ ունեցած քո փոխհարաբերությանը: Եթե դու լավագույն ամուսնության վերաբերյալ պարզ ձևակերպում ես ուզում, ապա դա կարող է սահմանվել հետևյալ ձևով:

- Աստծուն առաջին տե՛ղը տուր քո կյանքում:
- Թո՛ւյլ տուր, որ Աստված ընտրի քո կողակցին:
- Մի՛րով լցված քո ողջ սիրտը դիր՝ կազմելու համար քո կյանքի լավագույն ընկերությունը ոչ միայն այն դեպքում, երբ ժամադրվում ես, այլ նաև քո ամբողջ կյանքի ընթացքում:

Ամուսնությունն Աստծո ծրագիրն է մեզ համար: Նա ստեղծեց Ադամին ու Եվային՝ որպես երկրի առաջին անձնավորությունների, և Ինքն էլ կատարեց նրանց ամուսնական արարողությունը: Աստվածաշունչը լի է ամուսնացած մարդկանց օրինակներով: Այդ պատմություններն ամուսնության վերաբերյալ հստակ նկարագրություններ են տալիս՝ թե՛ դրական, թե՛ բացասական:

Թույլ մի՛ տուր, որ աշխարհը, կամ ֆիլմերը, կամ մարդիկ քեզ տանեն այլ ճանապարհով: Աստված գիտի, թե որն է քեզ համար լավագույնը: Նա քեզ սիրում է ավելի, քան ուրիշին, և ամենալավն է ցանկանում քեզ համար:

Երեմիա 29:11.

«Քանի որ Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին, - ասում է Տերը, - խաղաղությա՛ն խորհուրդներ և ո՛չ թե չարիքի, որ ձեզ ապագա ու հույս տամ»:

Ամուսնության և ծնող լինելու վերաբերյալ գրքեր շատ կան հրաշալի: Դասընթացի այս փոքրիկ մասը քեզ չի կարող սովորեցնել այն ամենը, ինչը քեզ անհրաժեշտ է իմանալ հաջողակ ամուսնություն ունենալու մասին: Ամուսնացած լինես, թե ոչ, սա քո կյանքում մի ասպարեզ է, որտեղ լավ կանես, եթե շարունակես ժամանակ ներդնել, որպեսզի սովորես՝ ինչպես դառնալ այնպիսին, ինչպիսին Աստված է ուզում, որ դու լինես:

1. Ինչպե՞ս կարելի է պատրաստվել հաջողակ ամուսնության համար:

Եթե դու ամուսնացած չես, ապա այն անձնավորության ընտրությունը, ում հետ դու ամուսնանալու ես, քո կյանքում երբևէ կայացրած ամենակարևոր որոշումներից մեկն է լինելու: Բայց և այնպես, փոխանակ քո ողջ ժամանակն անցկացնես կյանքի կատարյալ կողակից փնտրելու վրա, դու մեծ ուշադրություն՝ ն դարձրու Աստծո ուզած անձնավորությունը դառնալուն, որպեսզի լավ կողակից լինես այն մեկի համար, ում Աստված կընտրի քեզ համար:

Եթե դու արդեն ամուսնացած ես, կարիք չկա, որ աղոթես ու Աստծուն հարցնես, թե արդյո՞ք ճիշտ անձնավորության հետ ես ամուսնացել: Աստված հարգում է այն որոշումը, որը դու անցյալում կայացրել ես, և պատրաստ է քեզ օգնել՝ քո ամուսնությունն ավելի լավը դարձնելու համար, քան մինչ այդ է: Դու չես կարող հետ գնալ և փոխել քո ամուսնության անցած հատվածը, սակայն կարող ես որոշում կայացնել, որ այսօրվանից ի վեր քո հնարավորության չափով ամեն բան կանես՝ ամուսնական կյանքդ հաջողակ դարձնելու համար:

Ահա մի քանի մտքեր մի քանի տարբեր գործողությունների վերաբերյալ, որոնք դու կարող ես անել՝ հաջողակ ամուսնությունը նախապատրաստվելու համար: Անկախ այն բանից, ամուսնացա՞ծ ես դու, թե ոչ, սրանք կարևոր քայլեր են, որ դու կարող ես անել աճելու համար:

- ա. Դու պետք է շարունակ աճող անձնական փոխհարաբերություն ունենաս Հիսուսի հետ:
- բ. Դու պետք է սովորես ինքդ քեզ ընդունել:
- գ. Դու պետք է սովորես հնազանդվել քեզ վրա եղած բոլոր իշխանություններին:
- դ. Դու պետք է մաքուր խղճմտանք ունենաս:
- ե. Դու պետք է քո բարկությունն արտահայտելու աստվածաշնչյան պատկեր ունենաս: Դու պետք է քո անձնական իրավունքները տաս Աստծուն:
- զ. Դու պետք է ինքնատիրապետման ներքին դրական որակներ զարգացնես, հատկապես՝ քո սեռական վարքագծի մեջ:
- է. Դու պետք է հաղորդակցության լավ հմտություններ զարգացնես և սովորես բաց և անկեղծ լինել քո կողակցի հետ հաղորդակցվելիս:
- ը. Դու պետք է որոշես, թե որոնք են քո կյանքի նպատակները: Դրանցից մեկը կարող է լինել իմանալը, թե ինչ աշխատանք ես ունենալու:
- թ. Տղամարդը պետք է ի վիճակի լինի իր ընտանիքը ֆինանսապես օժանդակելու համար: Դու պետք է մեծ պարտքերից ազատ լինես:

Այս ցուցակը կարող էր շարունակվել մի քանի էջ ևս, դեռ կան բաներ, որոնք կարող են ավելացվել, որոնք կօգնեն մեզ հասկանալ, թե ինչ պետք է մենք անենք՝ Աստծո ուզած անձնավորությունը դառնալու համար: Հաջողակ ամուսնություն ունենալու համար կատարյալ լինելու կարիք չկա: Ուղղակի պետք է լրջորեն վերաբերվել մեզ հանդիպող մարտահրավերներին:

Դիտարկելով ամուսնավուծությամբ ավարտվող, կամ լուրջ խնդիրներ ունեցող ամուսնությունները՝ դու պետք է հասկանաս, որ Աստծո օգնության կարիքն ունես՝ հաջողված ամուսնական կյանք ունենալու համար: Սակայն պետք է աշխատես նաև քո անձնական աճի վրա, որպեսզի լինես լավագույն կողակիցն այն անձնավորության համար, ում հետ դու ամուսնանալու ես:

2. Ո՞րն է հաջողված ամուսնության Աստծո պատկերը:

Կան կյանքի մի քանի ասպարեզներ, որոնք ուշադրության կարիք ունեն՝ Աստծո ծրագրի համեմատ հաջողակ ամուսնություն ունենալու համար: Տեսնենք, թե որոնք են հաջողակ ամուսնության համար սկզբունքային կետերը, ինչպես է Աստված այն նկարագրում Աստվածաշնչում:

Մի օր կրոնական մի քանի առաջնորդներ փորձում էին թակարդը զգել Հիսուսին՝ Նրան հարցնելով ամուսնավուծության մասին: Իր պատասխանում Հիսուսը հստակեցրեց, թե որն է Աստծո ցանկությունն ամուսնության հարցում:

Մատթեոս 19:3-6.

«Փարիսեցիներն էլ եկան Նրա մոտ ու փորձելու համար ասացին.

«Օրինավո՞ր է արդյոք, որ մարդն իր կնոջն արձակի որևէ պատճառով»:

⁴ Եվ Հիսուսը նրանց ասաց. «Չե՞ք կարդացել, թե Նա՝ որ նրանց սկզբից ստեղծեց, արու և էգ ստեղծեց նրանց. ⁵ և ասաց. «Այս պատճառով տղամարդը պիտի թողնի իր հորն ու մորը և հարի իր կնոջը, և երկուսով կլինեն մեկ մարմին»: ⁶ Այսուհետ նրանք այլևս երկու չեն, այլ՝ մեկ մարմին: Ուրեմն, ինչ որ Աստված միացրեց, թող մարդը չբաժանի»:

Հիսուսը մեջբերեց Ծննդոցի առաջին էջերից, որտեղ Աստված հստակ նշում է, թե որն է Իր ծրագիրը՝ կապված ամուսնության հետ: Դիտարկենք հաջողակ ամուսնական կյանքի այդ երեք ուղեցույցները:

ա. Թողնել:

Ի՞նչ է նշանակում, երբ Աստված ասում է, որ տղամարդը պետք է «թողնի իր...»: Տղամարդը պատրաստ է ամուսնության, եթե պատրաստ է ինքնուրույն ապրելու:

Սա նշանակում է թողնել այն փոխհարաբերության տեսակը, որ տղամարդն ուներ իր ծնողների հետ, և նոր փոխհարաբերություն սկսել իր կողակցի հետ: Սա առաջինը կարիք կա ցույց տալ օրինական ամուսնության միջոցով: Սա հասարակական հաստատում է նոր ընտանիքի ձևավորման վերաբերյալ:

1. Տիզիկապես թողնել:

Այս թողնելը նաև ներառում է ինքնուրույն ապրելու կարողությունը քո առանձին տան մեջ: Այսօր շատ երկրներում ընդունված է, որ նորապասակներն ապրեն իրենց ծնողների հետ նույն տան մեջ: Սա չի հակասում Աստծո կամքին, բայց գործնական իմաստով կարող է շատ խնդիրներ առաջացնել նորաստեղծ ընտանիքում:

2. Զգացմունքային իմաստով թողնել քո ծնողներին:

Որպես նորաստեղծ ընտանիք՝ ծնողների հետ քո ապրած բնակավայրը թողնելուց շատ ավելի կարևոր է՝ սովորել, թե ինչպես թողնել ծնողներին զգացմունքային իմաստով: Դա չի նշանակում, որ դու դադարում ես նրանց հարազատը լինել, կամ նրանց հետ շփվել:

Զգացմունքային իմաստով ծնողներին թողնել նշանակում է, որ դու ունես իրենց հավանությունը դրա համար: Սա ստեղծում է զգացմունքային ազատություն, որ հետևես քո ամուսնական կյանքին՝ միևնույն ժամանակ իմանալով, որ քո ծնողները տալիս են իրենց օրհնությունը քո նորաստեղծ ընտանիքին: Նրանց զգացմունքային քաջալերանքն իրոք մեծ օժանդակություն կարող է լինել քո ամուսնական կյանքի համար:

Նրանց օրհնությունը ստանալու ձևերից մեկը նրանց ասելն է, որ դու այդ որոշումը հանձնել ես Աստծուն: Քո մեծագույն փափագը քո կյանքի այս ասպարեզում Աստծուն պատվելն է:

3. Թողնել «չամուսնացած մարդու» քո մտածելակերպը:

«Թողնելու» մեկ այլ կողմ, որը դու կարիք ունես հասկանալու և ընդունելու, «չամուսնացած մարդու» քո մտածելակերպից ձերբազատվելն է, և դա հատկապես վերաբերում է հակառակ սեռի հետ փոխհարաբերությունների ընթացքին:

Որպես չամուսնացած մարդ՝ դու ժամանակին ազատ էիր նայել նրանց և կշռադատել՝ ինքդ քեզ հարցնելով. «Սա՞ է այն անձնավորությունը, ում հետ ես կցանկանայի ամուսնանալ»: Դու ազատ էիր այդ անձնավորությունների հետ փոխհարաբերություններ փնտրելիս: Սակայն հիմա, երբ արդեն ամուսնացած ես, պետք է նոր սահմաններ դնես քո կյանքում՝ թե՛ գործողությունների, թե՛ մտքերի առումով:

Հիմա դու պետք է սահման դնես քո մտքում, որն ասում է. «Հեռո՛ւ մնա», երբ հարցը վերաբերում է տվյալ անձնավորությանը որպես ապագա կողակից նայելուն: Դու պետք է այդ տեսակ մտածելակերպը թողնելու որոշում կայացնես: Երբ միայնակ էիր, այդ մտածելակերպը պարկեշտ էր, սակայն հիմա, երբ դու ամուսնացած ես, այն այլևս պարկեշտ չէ:

Նույն ձևով կարելի է մոտենալ նաև այն հարցին, թե ինչպես ես դու նայում հակառակ սեռի ներկայացուցիչներին: Դու պետք է ինքդ քեզ դաստիարակես,

որպեսզի քո աչքերն ուղղված լինեն միայն քո կյանքի ընկերոջը: Նմանատիպ սահման է պետք դնել և «ո՛չ» ասել պոռնոֆիլմեր դիտելուն:

Դու կարող ես լավ փոխհարաբերություններ ունենալ հակառակ սեռի մարդկանց հետ, սակայն դա պետք է լինի քո կողակցի համաձայնությամբ և մասնակցությամբ: Ամուսնանալ, չի նշանակում կորցնել բոլոր ընկերներին, սակայն դա հաստատ նշանակում է, որ դու պետք է սովորես, թե ինչպես քո կողակցին մասնակից դարձնես այդ փոխհարաբերություններին:

բ. Միավորվել քո կնոջ/ամուսնու հետ:

Սկզբում աստված ասում է՝ թողնել հորն ու մորը: Հետո Աստված ասում է՝ միավորվել քո կնոջ/ամուսնու հետ: Իրար «սոսնձվելը» կարող է հիանալի հնարավորություն լինել՝ հաջողակ ամուսնության օգուտները տեսնելու համար: Ամուսնական կյանքի այս հատվածը վերաբերում է միմյանց նվիրվելու որոշմանը:

Շատ ամուսնությունների ժամանակ նորապսակները խոստանում են ապրել միասին, քանի դեռ մահը նրանց չի բաժանել: Սա ուղղակիորեն նշանակում է, որ տվյալ կինն ու ամուսինը պետք է միասին ապրեն: Սակայն սա ավելին է, քան միևնույն հասցեն ունենալը, քանի որ նաև խոսում է միմյանց զգացմունքային իմաստով ցանկանալու մասին:

Մերն ամենակարևոր «սոսինձն» է՝ երկու մարդկանց միավորելու համար:

Կողոսացիներին 3.14.

«Եվ այս բոլորի վրա հագեք սերը, որ կատարելության կապն է»:

Մերն ու հավատարմությունը երկու հատկություններ են, որոնք կենսական նշանակություն ունեն հաջողակ ամուսնական կյանքի համար: Աստված սիրում է փոխհարաբերություններ: Ինչքան շատ սիրես Աստծուն ու մտերիմ փոխհարաբերություն ունենաս Նրա հետ, այնքան քեզ համար հեշտ կլինի քո կողակցի հետ մտերիմ փոխհարաբերություն զարգացնել:

Աստված շատ կոնկրետ հանձնարարականներ է տալիս ամուսնուն, թե ինչպես նա պետք է սիրի իր կնոջը:

Եփեսացիներին 5:25-28.

«Ամուսինն է՛ր, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն և Իր անձը տվեց նրա համար, ²⁶ որ նրան սրբի և մաքրի ավազանի ջրով՝ խոսքով, ²⁷ որպեսզի այն Իր առջև ներկայացնի որպես փառավոր եկեղեցի՝ առանց արատի, խորշումի կամ այլ թերության, այլ սուրբ և անարատ լինի: ²⁸ Այդպես էլ ամուսինները պետք է սիրեն իրենց կանանց, ինչպես իրենց մարմինները: Ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում»:

Աստված ասում է, որ ամուսինը պետք է իր կնոջը սիրի այնպես, ինչպես Քրիստոսն է սիրում մեզ: Մա շատ բարձր ակնկալիքներով մի չափանիշ է ցանկացած տղամարդու համար: Մա այն տեսակի սեր է, որն Աստված ցանկանում է, որ յուրաքանչյուր տղամարդ ունենա իր կնոջ հանդեպ: Եվ երբ ամուսինն իր կնոջն այսպես սիրում է, կնոջ համար էլ հեշտ կլինի սիրել նրան իր ողջ սրտով:

Աստված չի ասում, որ քո կողակցին սիրես՝ ինչպես կինոաստղերն են անում: Նրանք, հնարավոր է, գեղեցիկ ֆիզիկական մարմին ունենան, սակայն դրանից ամուսնական կյանքը կատարյալ չի դառնում: Իրական սերը, որի մասին Աստված խոսում է, քո ամուսնական կյանքում հաջողության հասնելու բանալին է:

գ. Մեկ դառնալ:

Աստծո ծրագիրն ամուսնության համար այն է, որ դու և քո կողակցը սովորեք, թե ինչպես «մեկ դառնալ»: Մի մարդ ասաց. «Այո՛, բայց իրական բախումը սկսվում է, երբ նրանք փորձում են որոշել, թե իրենցից որը մեկ դառնա»:

Մեկ դառնալ չի նշանակում՝ կորցնել սեփական ինքնությունն ու կուլ գնալ մյուսի անհատականության մեջ:

Մեկ դառնալ նշանակում է՝ սովորել, թե ինչպես մեկանալ ֆիզիկապես, զգացմունքայնորեն և հոգևորապես: Մա Աստծո ծրագիրն է քեզ համար, այնպես որ դա հնարավոր է: Աստված քեզ չէր ասի, որ անես մի բան, որը միայն Ինքը կարող էր անել:

1. Ֆիզիկապես մեկանալ:

Աստված ծրագրել է, որ սեռական կյանքը պետք է պահվի միայն ամուսնական կյանքի համար: Աստված սեռական հարաբերությունը նկարագրում է որպես երկու անձերի մեկացում: Աստված այս գաղափարն օգտագործում է, որպեսզի մեզ ասի՝ չմեկանալ անառակի կամ ուրիշ մեկի հետ ամուսնական կյանքից դուրս:

Ա Կորնթացիներին 6:15-17.

«Չգիտե՞ք, որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են: Հիմա Քրիստոսի անդամներն առնեն և պոռնկի անդամ դարձնեն: Քա՛վ լիցի:

16. Ի՛նչ, մի թե չգիտեք, որ նա, ով մերձենում է պոռնկի, մեկ մարմին է լինում, որովհետև գրված է. «Երկուսը մեկ մարմին կլինեն»: **17. Իսկ նա, ով Տիրոջն է միացած, Նրա հետ մեկ հոգի է»:**

Այս հատվածը խոսում է ընդդեմ անառակության՝ մատնանշելով, որ սեռական հարաբերությունը տվյալ անձնավորության հետ մեկանալ է նշանակում: Աստված ասում է, որ դա պետք է պահվի միայն կողակցի համար:

Աստվածաշունչն այս թեմայի վերաբերյալ շատ ավելին ունի ասելու, նաև հստակ է, որ «մեկանալն» ավելին է, քան պարզապես սեքսի ֆիզիկական արտահայտությունը:

2. Զգացմունքորեն մեկանալ:

Զգացմունքորեն մեկանալ նշանակում է՝ իրոք սովորել կիսվել միմյանց հետ: Մենք շարունակում ենք մնալ որպես առանձին անհատ, սակայն ուզում ենք մեր ուրախությունները, հույսերը, երազանքները, հետաքրքրությունները, սրտնեղությունները, վշտերն ու կարիքները կիսել իրար հետ: Մենք սովորում ենք մեկս մյուսի հետ ներդաշնակության մեջ ապրել՝ փորձելով անել առավելագույնը, որպեսզի միմյանց համար հոգ տանենք ոչ միայն ֆիզիկապես, այլ նաև զգացմունքորեն:

Սա դառնում է մեր սրտում եղածը իրար հետ կիսելու միջոց: Մենք բացում ենք մեր սիրտը դիմացինի համար, տեղեկանում ենք միմյանց կարիքներից և աշխատում ենք առավելագույնը անել՝ մեր կողակցի կողքին լինելու համար:

Երբ դու մեկանում ես քո կողակցի հետ, սկսում ես կիսել նրա հետաքրքրությունները: Սա լավագույնս գործում է այն ժամանակ, երբ դուք երկուսդ էլ լիովին նվիրված եք՝ հետևելու Հիսուսին ձեր կյանքի բոլոր ասպարեզներում:

3. Հոգևորապես մեկանալ:

Եթե դու ուզում ես, որ քո ամուսնական կյանքը լինի ըստ Աստծո ցանկության, ապա դու և քո կողակցիցը պետք է սովորեք հոգևորապես մեկանալ: Սա սկսվում է ձեր երկուսի՝ Հիսուսի համար ապրելու նվիրվածությունից: Հոգևորապես մեկանալն ավելի ավելի խորն է: Դա ձեր կյանքում հոգևոր նույն նպատակներն ունենալն է:

Դրա համար է Աստված զգուշացնում՝ կողակցից ընտրելիս չընտրել այնպիսի մեկին, ով ճշմարիտ քրիստոնյա չէ: Տե՛ս Բ Կորնթացիներին 6:14-ը:

Եթե դու և քո կողակցիցն Աստծո հետ ձեր փոխհարաբերությունը դարձրել եք գլխավոր առաջնահերթություն, իսկ միմյանց հետ ունեցած ձեր փոխհարաբերությունը՝ երկրորդ առաջնահերթություն, ուրեմն դուք բարեհաջող ամուսնական կյանք ունենալու ճանապարհի վրա եք: Խաչվելուց մի քանի ժամ առաջ Հիսուսն աղոթեց Հայր Աստծուն, որ փափագում է մեզ տեսնել մեկացած այնպես, ինչպես Ինքը և Հայրն են Մեկ:

Հովհաննես 17:22-23.

«Եվ այն փառքը, որ Դու Ինձ տվիր, Ես նրանց տվեցի, որ մեկ լինեն, ինչպես Մենք Մեկ ենք.²³ Ես նրանց մեջ, և Դու՝ Իմ մեջ, որ նրանք կատարյալ լինեն միության մեջ. և, որպեսզի աշխարհն իմանա, որ Դու ուղարկեցիր Ինձ և սիրեցիր նրանց՝ ինչպես Ինձ սիրեցիր»:

Աստված ցանկանում է, որ դու քո ամուսնական կյանքում ունենաս այն նույն միությունը, ինչ Հայր Աստված, Հիսուս ու Սուրբ Հոգին ունեն Իրենց փոխհարաբերությունների մեջ: Աստված լավագույնն է ուզում քեզ համար:

Յուրաքանչյուր ամուսնական կյանք անցնում է դժվարին մարտահրավերներով: Եթե դու ամուսնացած ես, Աստված պատրաստ է քեզ օգնել, որպեսզի քո ամուսնական կյանքը դարձնես ավելի լավը, քան անցյալում էր: Իսկ եթե դեռ ամուսնացած չես, ուրեմն քո ապագայի հարցում վստահի՛ր Աստծուն: Թո՛ւ ւյլ տուր Նրան՝ քեզ առաջնորդել քո բոլոր քայլերի մեջ: Դու քո կյանքի համար Նրանից լավ առաջնորդ չես կարող գտնել:

Եզրակացություն

Մարդկանց հետ անձնական դրական փոխհարաբերություններ զարգացնելը քո կյանքի ամենավարձատրելի մասերից մեկն է: Մյուս կողմից՝ մարդկանց հետ քո անձնական փոխհարաբերությունները կարող են նաև լինել քո կյանքի ամենախառնաշփոթ և կործանիչ մասը: Հիանալի ընկերությունը չի ձևավորվում պատահականության արդյունքում, այն ձևավորվում է կյանքի ընկերային ասպարեզում Աստծո ուսուցումներին հետևելով:

Աստված քեզ ստեղծել է սիրո, ընկերության և քո կյանքը մարդկանց հետ կիսելու ցանկությամբ ու կարիքով: Եթե դու կենտրոնացած ես Հիսուսի հետ մտերիմ փոխհարաբերություններ զարգացնելու վրա, Նա քեզ կառաջնորդի բազմաթիվ տարբեր ընկերներ ձեռք բերելու հարցում, որոնք կհարստացնեն և կամբողջացնեն քո կյանքը:

